

3363

3364

3365

1894

28(045)

S-38

2010

2001

2001

2001

2001

28(075)

Մ-38

ԲՐԻՍՏՈՆԷՆԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԸՌԱՔԵԼԵԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«Իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ,
'ի նմին պարտի կալ և մեռանիլ».

Ա. Կորնթ. Է. 15—25. Հռով. ԺԱ. 29.

ԳԱՍԱԳԵՐՔ

ՊԵՏԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՈՆՆԵՐԻ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխատասիրեց

ԳԱՐԻԲԷԼ ԲԱՅՑ ՏԵՐ ԳԱՐԻԲԷԼԵԱՆՔ

Կրօնուսոյց



2012

Տ Փ Խ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկի փող. տ. 21.

Тип. М. Шарадзе, Никол. ул. д. 21.

1894

28286-43

Дозволено цензурою, Тифлисъ, 11-го Юля,
1894 года.



11392-57

Համաձայն պատուիրանի վեհափառ
Հայրապետի ազգիս ընթերցեալ գայս ձեռ-
նարկ „Քրիստոնեական վարդապետու-
թեան“ չգտի 'ի սմին -ինչ հակառակ ընդ-
դեմ դառանութեան Հայաստանեայց առա-
քելական Ս. եկեղեցւոյ, ուստի չիք արգելք
տալագրութեան սորին:

'ի 6 Յուլիսի 1894 ամի 'ի Ս. Էջմիածին
Նախագահ Արիստակես Կախկոպոս

ԹԻԻ 101

„Որ զբանն իմ լռէ և հաւատոյ Ա՛յնմ,
որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յա-
ւիտեանականս“: Յով. Ե. 24:

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Ք

Տիտիսու Ա. գիմնադիտնի կրօնուսոյց լինե-
լով և 'ի նկատի ունենալով՝ որ վերին դասարան-
ների աշակերտները՝ կրօնի յարմար դասագրքերի
բացակայութեան պատճառաւ, շատ դժուարու-
թիւնների են հանդիպում Հայաստանեայց եկե-
ղեցւոյ Քրիստոնէական վարդապետութիւնը սովո-
րելիս, հարկաւոր համարեցի Սալլանթեանցի «Արօ-
նագիտութիւն» և Մսերի «Հրահանգ Քրիստոնէա-
կան հաւատոյ» դասագրքերից օգուտ բաղելով՝
կազմել «Քրիստոնէական վարդապետութիւն Հայ-
աստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ» անու-
նով մի դասագիրք, որ իւր բովանդակութեամբ և
ծաւալով յարմար լինի աշակերտներին համար:

Դասագրքիս մէջ բացի «Նիկիական հան-
գանակ»ից դրել եմ և մեր եկեղեցւոյ ուղղա-
փառ հաւատոյ «Դաւանութիւն»ը, որ աշա-
կերտներն անպատճառ պէտք է սերտեն, 'ի հար-
կէ ուսուցչի կարևոր բացատրութիւնների օժան-
դակութեամբ:


Բ,

Թէ որքան նպատակիր եմ հասել, այդ ցոյց
կըտայ անաչառ բննադատութիւնն, որի ամեն մի
ցոյց տուած նկատողութիւնն յարգանքով կ'ըն-
դունի

Աշխատասիրողը:

Մայիսի 3, 1894 թ.

Տփիխ:



Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՉ — ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Աստուածաշունչ — Սուրբ գիրքն այն մա-
տեանն է, որ Աստուածային հոգու ազդեցու-
թեամբ գրել են Աստուածանից բնորուած
մարդիկ, որոնք անուանվում են Մարգարէք
և Առաքեալք:

Ս. Գրքի այն մասն՝ որ գրուեցաւ Քրիս-
տոսից առաջ մարգարէների ձեռքով, անուան-
վում է հին կտակարան, իսկ Քրիստոսից յե-
տոյ գրուածն առաքեալների ձեռքով՝ կոչվում
է Նոր կտակարան:

Հին կտակարանում Աստուած խոստանում
է մեզ, որ մարդոց Ադամայ մեղքից — յաւի-
տենական դատապարտութիւնից — ազատելու
համար կ'ուղարկի իւր Միածին Որդուն. և
այս խոստմամբ Աստուած մարդոց սիրտը նա-

խապատրաստեց օրինակներով ու մարգարէնե-
րի միջոցով խոստացած Փրկչին ընդունելու:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աս-
տուած յերաւի շնորհեց մարդոց իւր խոստա-
ցած Աստուածային Փրկիչն, իւր Միածին Որ-
դին, որ է Յիսուս Բրիստոս:

Հին կտակարանը պարունակում է քա-
ռասուն և հինգ (45) գիրք և իւր բովանդա-
կութեամբ չորս կարգի է բաժանվում՝

1. *Օրինադրական* — Ծննդոց, Ելից, Ղև-
տացւոց, Թուոց և Երկրորդ օրինաց գրքերն,
որոնք գրուած են Մովսէսի ձեռքով և կոչ-
վում են Մովսէսի օրէնք կամ հնգամատեան,
սուքա պարունակում են հին օրէնքներն, Աս-
տուծոյ խոստումներն և ուխտը:

2. *Պատմական* — Յեսուայ, Դատաւորաց,
Հռութայ, Թազաւորաց, Մնացորդաց, Եզրա-
սայ, Նեեմայ և Եսթերայ գրքերն, որոնք
գլխաւորապէս պարունակում են բարեպաշտ
և առաքինի մարդոց պատմութիւնները:

3. *Բարոյական կամ վարդապետական*
— Յովբայ, Դաւթի և Սողոմոնի գրքերն, ո-
րոնք պարունակում են Աստուածգիտութեան
ուսումն և մարդկային կեանքին վերաբերեալ
կանոններ և խրատներ:

4. *Մարգարէական* — Եսայի, Երեմիայի,

Եզեկիէլի, Դանիէլի և միւս տասներկու փոքր
մարգարէնեցի գրքերն՝ որոնք պարունակում
են մարգարէութիւններ և գուշակութիւններ
Յիսուս Քրիստոսի տնօրէնութիւնների մասին:

Նոր կտակարանը պարունակում է քսան
և եօթն (27) գիրք և իւր բովանդակութեամբ
չորս կարգի է բաժանվում՝

1. *Օրինադրական* — չորս աւետարաններ՝
ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յով-
հաննու. սուքա կոչվում են *Աւետարան*, որով-
հետև բարութեան և փրկութեան աւետիք են
պարունակում, այսինքն աւետում են մարդ-
կութեանն Փրկչի Գալուստը, Նորա ձեռքով
եղած գերագոյն բարիքը, Նորա երկրաւոր
կեանքի պատմութիւնը, Նորա հրաշալի գոր-
ծերը. Նորա փրկարար և կենդանարար վար-
դապետութիւնները, վերջապէս Նորա մահը
խաչի վերայ, փառաւոր յարութիւնն և սքան-
չելի համբարձումն:

2. *Պատմական* — Գործք առաքելոց գիր-
քըն, որ պատմում է Սուրբ Հոգւոյ իջնելն
առաքեալների վերայ և Քրիստոսի եկեղեցւոյ
սկզբնական վիճակը:

3. *Բարոյական կամ վարդապետական*
կաթողիկեաց կամ ընդհանրական եօթն գիրքն՝
որոնցից մէկը գրեց Յակովբոս առաքեալն. եր-

կուսը՝ Պետրոս առաքեալն, երեքը՝ Յովհաննէս
 և մինը՝ Յուդա առաքեալն. այլև Պողոս ա-
 ռաքեալը գրեց տասն և չորս մասնաւոր թրդ-
 թեր — մինը՝ Հռովմայեցւոց, երկուսը՝ Կորն-
 թացւոց, մինը՝ Գաղատացւոց, մինը՝ Եփեսաց-
 ւոց, մինը՝ Փիլիպպեցւոց, մինը՝ Կողոսացւոց,
 երկուսը՝ Թեսաղոնիկեցւոց, երկուսը՝ Տիմոթէո-
 սին, մինը՝ Տիտոսին, մինը՝ Փիլիմոնին և մինն՝
 Եբրայեցւոց. այս բոլոր գրքերն Աւետարա-
 նում աւանդած հաւատքի վարդապետութիւն-
 ների բացատրութիւններն և մեկնութիւննե-
 րն են:

4. Մարգարէական — Յովհաննու յայտ-
 նութիւնն, որ նկարագրում է Քրիստոսի եկե-
 ղեցւոյ ապագայ փառաւոր վիճակը:

Թէ հին և թէ նոր կտակարանի գրքերն,
 որոնք թուով 72 են, որոշուած են Սիոն Կա-
 թողիկոսի օրով 768 թ. Պարտաւ քաղաքում
 գումարած ժողովի մէջ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական վարդապետութիւնն այն
 ուսումն է, որ Յիսուս և Նորա առաքեալնե-
 րը սովորեցրին մեզ մարդոցս խօսքով, գրով
 և գործով աշխարհիս վերայ Աստուծոյ կամ-

քի համաձայն ապրելու և յաւիտենական կեան-
 քը ժառանգելու համար, այսինքն ճանաչել
 ճշմարիտ Աստուծուն և հաւատալ նորան, սի-
 րել նորան — կատարել նորա պատուիրանները:
 «Որ զբանն իմ լսէ և հաւատայ Այնմ, որ ա-
 ռաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենա-
 կանս» Յով. Ե. 24:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծա-
 նիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր
 առաքեցեր զՅիսուս Քրիստոս». Յով. ԺԷ. 3:

Հ Ա Ի Ա Տ

Հաւատն Աստուածանից մեզ պարգևած
 մի ներքին շնորհք է, որով կարողանում ենք
 ճանաչել, ընդունել և խոստովանել այն Աս-
 տուածային յայտնութիւնները — ճշմարտու-
 թիւններն, որ Աստուած պարգևել է մարդոց
 փրկութեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածա-
 յին յայտնութիւններին հենց այն պատճառաւ,
 որ նոցա մեզ տուող Աստուած արդար է և
 ճշմարիտ:

Հաւատն՝ որ ներքին շնորհք է, քրիստո-
 նեայն պարտաւոր է արտայայտել գործով և
 խոստովանել բերանով,

«Ոչ ամենայն, որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս հօր իմոյ, որ յերկինս է» Մատթ. է. 21:

Քրիստոնէական հաւատոյ հիմն է ինքն Յիսուս Քրիստոս, որի միջոցով Աստուած խոստացաւ փրկել մարդկան ազգը յաւիտենական դատապարտութիւնից — Ադամայ մեղքից. այս խոստումն Աստուած արեց նախ՝ նախամարդոց, նոցա դրախտից արտաքսելու ժամանակ՝ օձին ասելով՝ «Եւ եղից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ. և ՚ի մէջ զաւակի քո և ՚ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում՝ գլխոյ, և զու սպասեսցես նորա զարշապարի» գ. ծննդ. Գ. 15. յետոյ՝ նահապետներին, Մովսէսին և միւս մարգարէներին՝ «Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք. ՚ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն» Եբր. ա. 1 — 2»:

Քրիստոնէական հաւատը կայանում է նոյն իսկ *Քրիստոսի երկրպագութեան* եւ նորա *պատուիրանների* կատարման մէջ:

Յիսուս ուսուցանում էր մարդոց խօսքով և գործով՝ «Զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել» — Գործք. ա. 1., իսկ նորա առա-

քեալներն ու նոցա յաջորդները թէ խօսքով, թէ գործով և թէ գրով սովորեցնում էին այն բոլոր ճշմարտութիւններն, ինչ որ նոքա սովորել էին Յիսուսից՝ «Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ»։ Մատթէոս ԻԸ. 19 — 20:

«Հաստատուն կացէք, և պինդ կալարուք զաւանդութիւնսն, զոր ուսարուք եթէ բանիւ և եթէ թղթով մերով»։ ա. թեսաղ. բ. 14»:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՍՏՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէի հաւատը պէտք է լինի լուսաւոր, հեզ, հաստատ և կենդանի:

ա. Քրիստոնէի հաւատը լուսաւոր է, երբ նա միշտ ուսումնասիրում է Ս. Գիրքն, ուսանում է նորա մէջ եղած աստուածային ճշմարտութիւններն և Աստուծուն ու մարդոց վերաբերեալ բոլոր պարտականութիւնները՝ «Գննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունիլ զկեանս յաւիտենականս» Յով. Ե. 39:

բ. Քրիստոնէի հաւատը կը լինի հեզ,

երբ ս. գրքի մէջ պարունակած մարդկային մտքին անհասանելի աստուածային խորհրդներին և ճշմարտութիւններին կը հաւատայ հեղութեամբ, ինչպէս որ Դաւիթ մարգարէն իւր համար վկայում է՝ «Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ» Սաղ. ձժԷ.

գ. Քրիստոնէի հաւատը հաստատ կըլինի, երբ նա ամբարիշտ մարդոց դատողութիւններից, օրինակներից և գայթակղելի գործերից չի գայթակղուիլ, անշարժ կրմնայ իւր հաւատալիքի մէջ և աշխարհի նեղութիւնների ու փորձանքների տակ չի ընկճուիլ, այլ կըզօրանայ ինքն իւր հաւատով, ինչպէս որ Պօղոս առաքեալը պատուիրում է՝ «Արմատացեալք և շինեալք ՚ի Նա, և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ուսայքն»։ Պօղ. առ Կող. բ. 7»։

դ. Քրիստոնէի հաւատը կենդանի է, երբ նա ունենում է այն ամեն բարի գործերն, որ պահանջում է մեր հաւատն, ինչպէս որ Յակովբ առաքեալը պահանջում է՝ «Զի՛նչ օգուտ իցէ, եղբարք իմ սիրեցեալք, եթէ ասիցէ ոք հաւատս ունիլ և գործս ո՛չ ունիցի. միթէ՞ հաւատք առանց գործոց ապրեցողացա-

նեն զնա... հաւատք առանց գործոց մեռեալ է»։ Յակ. բ. 14, 29»,

Հ Ա Ի Ա Տ Ո Յ Ա Ր Գ Ի Ի Ն Բ Ն Ե Բ Ը

Քրիստոնէայն հաւատով մօտենում է Աստուծոյն և խաղաղութիւն ու արդարութիւն է հաստատում իւր և իւր Արարչի մէջ, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Այսուհետև արդարացեալք ՚ի հաւատոց զխաղաղութիւն կայցուք առ Աստուած՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Հռով. Ե. 1»։

Քրիստոնէայն հաւատով որդեգրվում է Տօր Աստուծոյ, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատով ՚ի Յիսուս Քրիստոս»։

Քրիստոնէայն հաւատով ստանում է յաւիտենական կեանք, ինչպէս որ Քրիստոս ասում է՝ «Ամենայն, որ հաւատայ ՚ի Նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս» Յով. Գ. 19»,

Քրիստոնէայն հաւատով բնակեցնում է իւր մէջ Յիսուսին, որ է կատարեալ երջանկութիւն և յաւիտենական կեանք՝ «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեցի և ես ՚ի նմա»։ Յով. Զ. 57»։

Քրիստոնեայն հաւատով զօրանում է յաղթող հանդիսանալու աշխարհի և իւր մարդկային չար ձգտումների դէմ՝ «Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի՝ և այս է յաղթութիւն, զոր յաղթեմք աշխարհի՝ հաւատքն մեր»։ ա. թ. Յով. Ե. 4»:



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Հ Ա Ի Ա Տ Ք

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Հ Ա Ի Ա Տ Ո Յ.

Այն բոլոր ճշմարտութիւններն, որոնք պէտք է լինին քրիստոնէի հաւատալիքը բովանդակած են համառօտակի հաւատոյ հանգանակի մէջ, որոյ աղբիւրը սուրբ գիրքն է:

Քրիստոնէութեան սկզբներում հաւատոյ հանգանակը կայանում էր միմիայն հետեւեալ խօսքերի մէջ՝ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», բայց երբ քրիստոնէութեան դէմ մուշար կարծիքներ յայտնուեցան, 325 թ. երեք հարիւր տասն և ութ (328) հայրապետներ մայիսի 20-ին ժողովուելով Նիկիա քաղաքը՝ կազմեցին առաջին տիեզերական ժողովն և Ս. Հոգւոյ ներուշնամբ ու միա-

11392-57



բան հաւանութեամբ գրեցին հետեւեալ հան-
գանակը տասներկու մասից բաղկացած.

1. «Հաւատամք 'ի մի Աստուած, 'ի Հայրն
ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևե-
լեաց և աներևութից:

2. «Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈր-
դին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հորէ Միա-
ժին, այսինքն յեութենէ Հօր. Աստուած յԱս-
տուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ
յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած.
նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն
ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք
և աներևոյթք:

3. «Որ յաղագս մեր մարդկան եւ վասն
մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնա-
ցաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մա-
րիամայ Սրբոյ Կուսէն Հոգևովն սրբով. որով
էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն
որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կար-
ծեօք:

4. «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ:

5. «Յերրորդ աւուր յարուցեալ:

6. «Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն,
նստաւ ընդ աջմէ Հօր:

7. «Բալոց է նովին մարմնովն եւ փա-

ռօք Հօր, 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս,
որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

8. «Հաւատամք եւ 'ի սուրբ Հոգին, յա-
նեղն եւ 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս
եւ 'ի մարգարէս եւ յաւետարանս. որ էջն
'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն եւ բը-
նակեցաւ 'ի սուրբսն:

9. «Հաւատամք եւ 'ի մի միայն, ընդ-
հանրական եւ առաքելական եկեղեցի,

10. «'ի մի մկրտութիւն, յապաշխարու-
թիւն, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մե-
ղաց:

11. «'ի յարութիւն մեռելոց:

12. «'ի դատաստան յաւիտենից հոգւոց
եւ մարմնոց, յարքայութիւն երկնից, եւ 'ի
կեանս յաւիտենականս»:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ
էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Սուրբ
Հոգին, կամ թէ՛ յօչէից եղեն, կամ յայլմէ
էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ
կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են,
կամ ալլալլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթո-
ղիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցի:

Այս ժողովին հայաստանեայց եկեղեցւոյ ներկայացուցիչն էր Ս. Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Ս. Արիստակէս, որ վերագառնալով Հայաստան իւր հետ բերեց Նիկիոյ հանգանակըն եւ քսան (20) յօդուածով կանոնները:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ 326 թ. ազգային ժողով գումարեց Վաղարշապատում եւ այնտեղ կանոններն ու հանգանակն ընդունելուց յետոյ՝ վերան աւելացրեց՝

«Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան գյաւիտեանս, երկիրապաանելով Սրբոյ Երրորդութեանն, եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն», որ միայն հայաստանեայց եկեղեցւոյ մէջ է կարգացվում:

Բացի նիկիական հանգանակից մեր եկեղեցին ունի իւր «ուղղափառ հաւատոյ դաւանութիւնն», որ ամեն ժամանակ պատարազիչ քահանան, առաւօտեան ժամասացութիւնից առաջ՝ «հրաժարիմք»-ից յետոյ ձեռնամած ասում է՝

«Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անծին եւ անսկիզբն. այլ եւ ծնող Սրբւոյ եւ բղխող Հոգւոյն սրբոյ:

«Հաւատամք զԲանն Աստուած, անեղ ծրնեալ եւ սկսեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ոչ յետոյ եւ ոչ կրտսեր, այլ որքան Հայրն Հայր, ընդ նմին եւ Որդին Որդի:

«Հաւատամք զսուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ ՚ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ:

«Հաւատամք զԵրրորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց եւ աներևութից:

«Հաւատամք յեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց:

«Հաւատամք զմինն յերից անձանց զԲանն Աստուած, ծնեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ՚ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ. առեալ յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. եւ եղև Աստուածն կատարեալ, մարդ կատարեալ հոգւով եւ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան, անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աս-

տողածութեան Նորա՝ եւ ո՛չ վախճան մարդկութեան նորա. զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ շրջեալ 'ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ 'ի մկրտութիւն. Հայր 'ի վերուստ վկայեալ՝ դա է որդի իմ սիրելի, և Հոգին սուրբ ազաւնակերպ իջեալ 'ի վերայ Նորա. փորձեալ 'ի սատանայէ և յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զփրկութիւն, աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծարաւեալ. յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն. մարմինն եղեալ 'ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն, և Հոգւովն իջեալ 'ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս և ազատեալ զհոգիսն. յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց և երևեալ աշակերտացն:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր. այլ եւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

«Հաւատամք եւ զհատուցումն գործոց, արդարոցն կեանք յաւիտենական եւ մեղաւորացն տանջանք յաւիտենական»:

Հաւատոյ հանգանակի մէջ եղած սչմարտութիւնների բացատրութիւնը:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

«Հաւատամք 'ի մի Աստուած.....».

Այս խօսքերով խոստովանում ենք, որ Աստուած մի է, ինչպէ՛ծ որ վկայում է Հոգին սուրբ Մովսէս մարգարէի բերանով՝ «Լուր իսրայէլ, զի Տէր Աստուած մեր, Տէր մի է»: Բ. օրինաց. 2. 4., և Պօղոս առաքեալը թէ՛՝ «Մի Աստուած եւ Հայր ամենեցուն որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենեսին ի մեզ»:

Սակայն Աստուծոյ միութեան մէջ կան երեք անձինք՝ ա. Հայր Աստուած, որ է պատճառ Որդւոյ անճառ եւ անժամանակ ծննդեան:

եւ Հոգւոյն սրբոյ անհաս եւ անժամանակ
բղիման. բ. Որդի Աստուած յաւիտենական
ծնունդ Հօրից եւ դ. Հոգին սուրբ յաւիտե-
նական բղիտումն Հօրից: Այս երեք անձնաւո-
րութիւնները կազմում են մի անձառելի մի-
ութիւն, որովհետեւ սոքա երեքն էլ մի են
եւ հաւասար բնութեամբ, էութեամբ եւ աս-
տուածութեամբ՝ «Երեք են, որք վկային յեր-
կինս Հայր, Բան եւ Հոգի սուրբ եւ սոքա
երեքինս մի են». ա. թ. Յով. Ե. 7:

«Մկրտեցէք զնոսա՝ յանուն Հօր եւ Որդւ-
ոյ եւ Հոգւոյն սրբոյ». Մատթ. ԻԸ. 19:

«Հաւատա՛ս՝ եթէ Հայր յիս եւ Ես ՚ի
Հայր. Ես եւ Հայր իմ մի եմք». Յով. Ժ. 30:

Թէպէտ հին կտակարանի մէջ Աստուծոյ
միութիւնը պարզապէս վկայուած է, բայց
այդ աստուածային միութեան մէջ ամենա-
սուրբ երրորդութեան երեք անձանց գոյու-
թիւնը լուսաբանած չէ, այլ աստուածային
գործողութիւնների մասին խօսելիս յոգնակա-
նաբար է խօսում. «Արասցուք մարդ ըստ
պատկերի մերում», «Եկայք, իջցուք եւ խառ-
նակեսցուք անդ զլեզուս նոցա», «Ես ընդ
ծեզ եմ, ասէ Տէր ամենակալ, եւ Բան, զոր
ուխտեցի ընդ ձեզ... եւ Հոգին իմ, որ կայ
ի միջի ձերում». Անգիա. Բ. 5, 6:

Հին կտակարանի մէջ պարզապէս լուսա-
բանած չէ երեք անձանց գոյութիւնը նորա
համար, որ խստապարանոց և դէպի բազմաս-
տուածութիւնը ձգտումն ունեցող ազգին հե-
ռու պահպանէ բազմաստուածութեան գաղա-
փարից:

Սակայն նոր կտակարանի մէջ պարզա-
պէս ասուած է երեք անձանց գոյութիւնը մի
Աստուածութեան մէջ, օրինակ, երբ Յիսուս
Յորդանան գետում մկրտուեցաւ եւ դուրս էր
գալիս, այն ժամանակ Հոգին սուրբ աղաւնա-
կերպ իջաւ նորա վերայ, իսկ Հօր ձայնը լքու-
վում էր՝ «Դա է որդի իմ սիրելի, դմա յու-
արուք». Մատթ. ԺԷ. 5. ուրեմն Որդին մը-
կրտվում էր, Հոգին իջնում էր աղաւնակերպ,
Հայրը վկայում էր: Ս. Երրորդութեան խոր-
հուրդը նոյնպէս յայտնուեցաւ Քրիստոսի պայ-
ծառակերպութեան ժամանակ: Քրիստոս իւր
աշակերտներին պատուիրեց՝ «Գնացէք այսու-
հետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս,
մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ» Մատթ. ԻԸ 19—20:

Ա Ր Ա Ր Չ Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

«Հաւատամք... 'ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներեսութից»:

Այս խօսքերով դաւանում ենք և խոստովանում, թէ ամենասուրբ երրորդութեան անձներից մինն, որ որոշվում է Հայր անունով, իւր ամենակարող Բանիւ և սուրբ Հոգւով ոչնչից ստեղծեց բոլոր երկնաւոր եւ երկրաւոր, երեւելի և աներեսյթ արարածներն, ինչպէս որ ս. Գիրքը վկայում է՝ «'ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր, եւ երկիր էր աներեսյթ եւ անպատրաստ եւ խաւար 'ի վերայ անդնդոց եւ Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջրոց» Ծննդ. ա. 1: «'ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն. 'նա էր 'ի սկզբանէ առ Աստուած. ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ» Յով. Ա. 1:

«Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր եւ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան եւ Հոգւով ընրանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա» Սաղ. ԼԲ. 6:

Աներեսյթ արարածները հրեշտակներն են, որոնք անմարմին, անմահ հոգիներ են, ստեղծուած 'ի սպասաւորութիւն Արարչին. և մարդոց հոգիքը:

Հրեշտակները բաժանուած են ըարի և չար: Բարի անուանվում են այն հրեշտակներն, որոնք անփոփոխ մնացին Աստուծուն հնազանդ. սոքա բազմաթիւ են և բաժանվում են ինն դասերի՝ Սերովբէք, Քերովբէք, Աթոռք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Զօրութիւնք, Տէրութիւնք, հրեշտակք և հրեշտակապետք:

Չար հրեշտակներ—սատանաներ, դևեր և չար ոգիներ՝ նոքա են, որոնք իւրեանց ամբարտաւանութեամբ Աստուծոյ դէմ մեղանչելով կորցրին իւրեանց երջանկութիւնն և դատապարտուեցան յաւիտենական պատժի:

Երեսելիքն աշխարհն է իւր զանազան տեսակ նիւթական գոյացութիւններով, որ Աստուած ոչնչից ստեղծեց վեց օրում՝

Առաջի օրն ստեղծեց լոյսը:

Երկրորդ օրը՝ հաստատութիւնը (օդ):

Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և հրամայեց, որ ցամաքի վերայ աճեն բոյսեր:

Չորրորդ օրն՝ երկնային մարմիններն—արեգակը, լուսինն և աստղերը:

Հինգերորդ օրն՝ օղու մ թուշուներն և ջրում ձկները:

Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիներն և ապա մարդը:

Եւթական աշխարհի բոլոր գոյացութիւններից գերագոյնն է մարդն, որովհետեւ Աստուած մարդուն տուել է հոգի և ընկալանութիւն մտածելու, խորհելու, դատելու և զարդարել է նորան իւր պատկերով, որ հոգւոյ անմահութիւնն է, սրբութիւնն է:

Թէև մարդու պատուիրանազանցութեամբ աղօտացաւ այդ աստուածային պատկերը, սակայն իւր Միածին Որդւոյ միջոցով նորոգեց նոյնն և հարթեց մարդոյ առաջ փրկութեան ճանապարհն, որ տանում է դէպի յաւիտենական կեանքն, որի համար և ստեղծել էր: Պօղոս առաքեալն ասում է՝ «Այլ Աստուած, որ մեծն է ողորմութեամբ վասն սիրոյն, զոր սիրեաց զմեզ, մինչդեռ մեռեալք էաք՝ ի մեղքս, կենդանիս արար զմեզ՝ ի Յիսուս Բրիստոս»:

«Որպէս Ադաման ամենեքեան մեռանին, նոյնպէս եւ Բրիստոսիւ ամենեքեան կենդանացին»:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԻ ԿԱՍ

ԱՍՈՐՈՎԵԼԻՔ.

Ս. Գիրքն ուսուցանում է մեզ Աստուծոյ կատարելութիւններն, որք են Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, Անեղ-ինքնագոյ, Հոգի, Յաւիտենական, Անփոփոխ, Ամենուրեք, Ամենագէտ, Ամենատես, Ամենասուրբ, Ամենաբարի, Ամենիմաստ:

Սյս կատարելութիւններից հանգանակի մէջ լինուած են Արարիչ և Ամենակալ խօսքերը՝ «Հաւատամք... ՚ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի», որովհետեւ այդ երկու կատարելութիւնների մէջ պարունակվում են և միւս մնացեալներն, օրինակ խոստովանելով, թէ Աստուած Արարիչ է և Ամենակալ, խոստովանում ենք, որ նա է Անեղ-ինքնագոյ, որովհետեւ արարածն արարածների պատճառ չէ կարող լինել:

Խոստովանելով, որ Աստուած Անեղ-ինքնագոյ է, խոստովանում ենք, որ նա է Յաւիտենական, որովհետեւ սկիզբն չունեցողը՝ վախճան էլ չէ կարող ունենալ:

Խոստովանելով, որ Աստուած Յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա է Ան-

փոփոխ, որովհետև թէ բնութեամբ և թէ գոյութեամբ նա երբէք չէ փոփոխվում:

Խոստովանելով, թէ Աստուած անփոփոխ և յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա ամենապարզ Հոգի է, որովհետև անփոփոխ և յաւիտենական կարող է լինել այն էակը միայն, որ նիւթից չէ բաղկացած: Քրիստոս ասում է՝ «Հոգի է Աստուած եւ երկրպագուաց նորա հոգևով եւ ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել»։ Յով, Գ. 24:

Խոստովանելով, թէ Աստուած ամենապարզ Հոգի է, խոստովանում ենք, որ նա է և Ամենուրեք, որովհետև նա ամենայն տեղ է իւր աստուածային գորութեամբ, և եթէ Աստուած ամենուրեք է, ապա ուրեմն Ամենագէտ և Ամենատես է:

Աստուած Ամենիմաստ է, որովհետև անհուն իմաստութեամբ մարդուն ուղղում է զէպի բարին և ամբողջ տիեզերքը կառավարում է իմաստուն ճարտարապետութեամբ:

Աստուած Ամենաբարի է, որովհետև իւր բարիքը պարզեւում է բոլոր արարածներին իւրաքանչիւրին օգուտ բերելու յարմար միջոցներով, ինչպէս Յովհաննէս առաքեալը գրում է՝ «Ամենայն տուրք բարիք եւ ամե-

նայն պարգևը կատարեալը 'ի վերուստ են իջեալք առ ի Հօրէ լուսոյ»: Յով. ա, 17:

Աստուած Ամենասուրբ է, որովհետև նա հեռու է ամենայն չարիքներից եւ սիրում է տեսնել մարդոց մէջ արդարութիւն, սրբութիւն:

Աստուած Արդար է, որովհետև նա մեզ տուել է արդար եւ բարենպատակ օրէնքներ, որոնց կատարումն ամենայն ճշմարտութեամբ պահանջելով, արդարութեամբ վարձատրում է օրինակատարներին եւ պատժում օրինազանցներին:

Աստուած Ս. Գրքի մէջ անուանվում է Գթած, Ողորմած, Երկայնամիտ, եւ Բազումողորմ, որովհետև նա՝ իւր բարիքները մեղաւորներին տալով, սպասում է նոցա դարձին եւ՝ ներելով յանցանքերը, մօտեցնում է իրեն:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԻՆԱՄՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ անհնարին էր առանց Աստուծոյ կամքի տիեզերքի ոչնչից գոյանալն, այնպէս էլ անհնար է տիեզերքի անխախտ և բարեկարգ կառավարութիւնն առանց աստուա-

ծային նախախնամութեան. Քրիստոս ասում է՝ «Հայր իմ մինչև ցայժմ գործէ եւ Ես գործեմ». Յով. Ե. 17: «Ես տայամենայնի կեանքս եւ շունչ զամենայն ինչ. զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք». Գործ. ԺԷ. 25, 28:

Աստուած իւր նախախնամութեամբ կառավարում է եւ պահպանում բոլոր արարածներին, հոգալով նոցա ամեն պիտոյքն եւ անխտրաբար խնամելով երկրիս վերայ արդարներին եւ մեղաւորներին:

Այսպիսի նախախնամութեամբ Աստուած կառավարում է եւ պահպանում իւր եկեղեցին եւ պիտի պահպանի յաւիտեանս: Եթէ հին եւ նոր եկեղեցին՝ այնքան հալածանքներին և դժուարութիւններին տանելով, մինչև անց անսօր յարատեւել է, այդ անժխտելի ապացոյց է Աստուծոյ յատուկ նախախնամութեան: Քրիստոս ասում է՝ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԸ. 20:

Հանգանակի առաջին մասն ուսումնասիրելով մենք սովորեցինք հետևեալ հաւատալիքները՝

Գոյութիւն Աստուծոյ, Միութիւն Աստուծոյ, Երրորդութիւն աստուածային անձանց, Արարչագործութիւն, Կատարելութիւնք կամ Ստորագելիք Աստուծոյ եւ Ծախսխնամութիւն Աստուծոյ:

Ո Ր Կ Ի Ն Ա Ս Տ Ո Ւ Ա Մ .

«Հաւատամք եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին՝ այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած մշմարիտ յԱստուծոյ մշմարտէ՝ ծնունդ եւ ոչ արարած. նոյն ինքն ՚ի ընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղել յերկինս եւ ՚ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

«Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ Կուսէն հոգւովն սրբովորով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ՚ի մարդ, մշմարտապէս եւ ոչ կարծեօք»:

Այս դաւանութեամբ խոստովանում ենք մեր միակ Տէր և Փրկիչ ամենասուրբ երրորդութեան երկրորդ անձն՝ Որդին Աստուած, յաւիտենից առաջ հօրից ծնուած Միածին, աշխնքն էակից, արարչակից, համաքուն, համափառ և համագօր հօր և սուրբ հոգւոյն, (ինչպէս լոյսը լուսից բղխած) ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուածանից յաւիտենից առաջ ծնուած և ո՛չ արարած — ստեղծուած:

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած հօր և սուրբ հոգւոյ կամբով մարդացաւ, ճըշմարտապէս մարդկային մարմին և բնութիւն առաւ Ս. Կոյս Մարիամից: Եւ որովհետեւ Ս. Կոյս Մարիամը Յուդայի ցեղիցն եւ Դաւթի ազգիցն էր, այս պատճառաւ էլ Աստուած՝ եւ Աստուծոյ որդին, որ եղաւ մարդ, անուանուեցաւ Որդի Աստուծոյ եւ որդի մարդոյ: «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած» Եսայի:

«Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայքոյ».
Ղուկ. Ա. 55:

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած, աւետարեր հրեշտակի խօսքի համաձայն՝ անուանուեցաւ Յիսուս, որ է Փրկիչ, մարդ-

կային ազգը մեղքից և մահուան դատապարտութիւնից փրկելու համար՝ «ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց».
Մատթ. Ա. 21:

Յիսուս անուանվում է և Զրիստոս, Մեսսիա, որ նշանակում է Օծեալ, նախ՝ որովհետեւ տեսնում էին նորա վերայ այն բոլոր գործերն և կատարելութիւններն, որոնք գուշակել էին մարգարէները Մեսսիայի մասին, որին սպասում էին անհամբերութեամբ:

Երկրորդ՝ նորա համար, որ Յիսուս կատարեց իւր կեանքի մէջ մարգարէի, քահանայի և թագաւորի պաշտօնն, որոնք եբրայական եկեղեցւոյ օրէնքի համաձայն օժիւմ էին իւղով. իսկ Յիսուս յաւիտենից օծեալ էր ս. հոգւոց:

Յիսուս մարգարէի պաշտօնն աւելի գերազանցութեամբ կատարեց, քան թէ միւս մարգարէներն, որովհետեւ նա ուսուցանում էր մարդոց Աստուծոյ կամքը, ցոյց էր տալիս մարդոց բարոյականութեան փրկարար ճանապարհը. նա քարոզում էր, որ Աստուած ամեն միեւնի իւր գործի համեմատ կը հատուցանէ. նա աստուածային հրաշքներով ապացուցանում էր, որ ինքն առաքեալ է Աստու-

Տոյ՝ «Եթէ ոչ գործեմ՝ զգործս հօր իմոյ, մի հաւատայր ինձ»:

Յիսուս կատարեց քահանայի պաշտօնն աւելի զերազանցութեամբ, քան Ահարոնեան քահանաներն, որովհետեւ նա աստուածաբար թողնում էր մարդոց իւրեանց մեղքերը: Նա իւր կեանքը պատարագեց մարդոց փրկութեան համար սուրբ խաչի սեղանի վրայ. նա եղաւ նոր ուխտի միջնորդ Աստուծոյ և մարդոյ մէջ. նա երկնքում միշտ բարեխօս է հօր մօտ մեր մեղքերի թողութեան համար:

Յիսուս ոչ թէ երկրաւոր թագաւոր էր, ինչպէս հրէաները կարծում էին, այլ հոգւոր և երկնաւոր թագաւոր է բոլոր տէրքերի, մանաւանդ իւր եկեղեցւոյ, որի հետ յաւիտեան լինել խոստացաւ, և խնամում է ու պահպանում նորան: «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ». Յով. ԺԸ. 36:

«Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա եւ թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակովբայ յաւիտեան, եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի». Առկ. Ա. 32—34:

«Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԸ. 20:

Հայաստանեայց եկեղեցին դաւանում է, որ Աստուծոյ որդին, ս. Վոյս Մարիամից առնելով մարդկային բնութիւնն և միացնելով իւր աստուածային անձի և բնութեան հետ՝ եղաւ կատարեալ մարդ հոգւով, մտքով և մարմնով, կատարեալ Աստուածութեամբ. մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն երկու բնութիւնից՝ անշփոթ և անբաժան միաւորած միմեանց հետ մէկ անձի — Բրիստոսի մէջ:

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր:

«Գալոց է նովին մարմնովն եւ փառօք հօր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»:

Այս դաւանութեամբ նախ խոստովանում ենք, թէ Յիսուս իւր ճշմարիտ վարդապետութիւնը մարդոց ուսուցանելուց յետոյ, ամենասուրբ երրորդութեան նախասահման տնօրէնութեան համաձայն, կամեցաւ իւր անձը զոհաբերել մարդկային ազգի փրկութեան համար. ուստի կամաւորապէս յանձն առաւ չար-

չարուել իւր վարդապետութեան հակառակորդներին և, 'ի լրումն ամեն տեսականարգական չարչարանքների՝ բարձրանալ խաչի վերայ մարդկանց մեղքի և մահի դատապարտութիւնից ազատելու համար:

Երկրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս խաչի վրայ ճշմարտապէս մեռաւ և թաղուեցաւ գերեզմանում: Նա իւր անպարտական մահով ջնջեց մեր հակառակութեան կամ թշնամութեան ձեռագիրը. «Ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօք իւրովք, որ կայր մեզ հակառակ՝ եբարձ զայն 'ի միջոյ, եւ բեւեռեաց ընդ խաչափայտին». Կողոս. Բ. 14: Նա մեզ հաշտեցրեց Հայր Աստուծոյ հետ և ազատեց յաւիտենական դատապարտութիւնից—Ազամայ մեղքից:

Երրորդ խոստովանում ենք, թէ Յիսուս, իւր և ուրիշ շատ մարգարէների գուշակութիւնների համաձայն՝ իւր թաղման երրորդ օրը յարութիւն առաւ: Նա իւր յարութեամբ հաստատեց մեր ապագայ յարութիւնն և յաւիտենական կենաց յոյսը՝ «Եղեւ պտուղ եւ անդրանիկ ամենայն ննջեցելոց... եւ ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան»—Ժամագիրք:

Չորրորդ խոստովանում ենք, թէ Յիսուս,

իւր յարութիւնից յետոյ՝ յաճախ երևում էր իւր աշակերտներին և խօսում էր նոցա հետ Աստուծոյ արքայութեան մասին. Նա նրանց տալիս էր պատուէրներ և խոստացաւ ուղարկել Սուրբ Հոգին նրանց զօրացնելու և մխիթարելու համար: Եւ ապա Յիսուս, քառասներորդ օրը Զիթենեաց սարի վրայ իւր աշակերտներին օրհնելով՝ համբարձաւ երկինքն և Հօր աջ կողմը նստաւ, այսինքն Յիսուս՝ բոլոր տնօրէնութիւնները կատարելով, նոյն մարմնովն երկինքը վերացաւ և աստուածային փառքը մտաւ, որ յաւիտենից հօրից ունէր՝ «Ո՛չ զնոյնս պարտէր շարչարիլ Բրիստոսի, եւ մըտանել 'ի փառս իւր»՝ Առկ. ԻԳ. 26

Եւ հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս նոյն մարդկային մարմնով և Հօր փառքով կրկին գալու է աշխարհ կենդանիներին և մեղաւորներին արդարապէս դատելու՝ մեղաւորներին յաւիտենական պատիժ, արդարներին յաւիտենական երջանկութիւն յատկացնելու և ամենքի վերայ յաւիտենական թագաւորելու: «Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք եւ ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք եւ այլն. «Մատթ. ԻԵ. 31, 32»:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴԻՈՅ ՄԱՐԳԵՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ
ՄՈՂՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Աստուածորդոյ մարգեղութեան դէմ եղած մոլորութիւններից առաջինն է հրէից ազգի մոլորութիւնն, որ Յիսուսին ակնկալեալ Մեսսիան չհամարելով՝ դեռ ևս սպասում է նոր Մեսսիայի գալստեանն. այն ինչ ակնկալեալ Մեսսիայի վերաբերութեամբ մարգարէների բոլոր գուշակութիւնները բառ առ բառ, կետ առ կետ անթերի կատարուել են Յիսուս Քրիստոսով, որովհետեւ նախ՝ Մեսսիան պէտք է գար Ջորաբարէլի շինած տաճարն և, Անգեայ ու Մաղաբիա մարգարէների գուշակածին համաձայն՝ այնտեղ պիտի բարոզէր ոգոց խաղաղութիւն. այն ինչ Ջորաբարէլի տաճարն ահա 18 դար է, որ կործանուել է և նորա մէջ եղած զոհերը, պատարագները, սրբութիւնն ու սեղաններն, որոնք ճշմարիտ Մեսսիայով կատարուելիք բաւութեան և փրկագործութեան ստուերական նմանութիւններն էին՝ բարձուել են:

Երկրորդ՝ Դանիէլ մարգարէի գուշակած 490 տարի ժամանակամիջոցը, տաճարի նորոգութիւնից հաշուելով՝ լրանալուն պէս ծնաւ Մեսսիան: Եւ երրորդ՝ Մեսսիան պիտի գար Յուդայի

ցեղից և Յուդայի քաղաքական իշխանութիւնը դեռ չվերջացած, այն ինչ 1894 տարի է անցել, որ Յուդայի քաղաքական իշխանութիւնը վերջացել է Հերովդէսով. և հրէից դեռ ևս ակնկալեալ Մեսսիայի Յուդայի շառաւիղից լինելն այսուհետև հաստատուել կամ ապացուցանել անկարելի է, որովհետև տաճարի հետ այրուեցան և անհետացան այն բոլոր արձանագրական մատեաններն, որոնցով կարելի կը լինէր հաստատուել և վաւերացնել նոր ծնուելի Մեսսիայի Յուդայի ցեղից լինելը

2. Երկրորդ հերետիկոսն Աստուածորդոյ մարգեղութեան դէմ եղաւ Աղէքսանդրացի Արիոս յոյն երէցն, որ Յիսուսին Աստուած և Որդի Աստուծոյ չէր դաւանում, և ոչ հաւասար և համագոյակից Հօր և Ս. Հոգւոյն, այլ օտար ոմն և արարած՝ բոլոր արարածներից բարձր կատարելութիւններով, բայց ոչ Աստուած և արարիչ: Արիոսը հիմնվում էր Յիսուսի հետևեալ խօսքի վերայ՝ «Հայր իմ՝ մեծ է, քան զիս», այն ինչ այս խօսքը վերաբերվում է Յիսուսի մարգկային խոնարհ վիճակին և բնութեանն:

Այս մոլորութիւնը դատապարտեց Նիկիոյ տիեզերական ս. ժողովը 325 թ. Մայիսի 20-ին, որին Հայաստանեայց եկեղեցւոյ կողմից ներկայ

էր Ս. Արիստակէս Հայրապետը Ս. Լուսաւորչի
 Հաւանութեամբ: Ժողովը սահմանեց դաւանել
 Յիսուսին ճշմարիտ Աստուած և Որդի Աստուծոյ
 Համագոյակից և համաբուն Հօր և Ս. Հոգւոյն:
 Այս ժողովում խմբագրուեցաւ հաւատոյ հան-
 գանակը:

3. Երրորդ հերետիկոսն եղաւ Կ. Պօլսոյ
 Յունաց նեստոր պատրիարքն, որ ուրանում էր
 Յիսուս Քրիստոսի իսկապէս Աստուծոյ որդի և
 մարդոյ որդի լինելը, և չէր խոստովանում թէ
 Յիսուս է ճշմարիտ Աստուած և Որդի Աստուծոյ,
 Յիսուսի մարդկային մարմինը նորա աստուածու-
 թեան բնակարան էր քարոզում, իսկ Սուրբ Կոյս
 Մարիամին դաւանում էր մարդածին, և ոչ Աս-
 տուածածին:

Այս մոլորութիւնը դատապարտեց Եփեսոսի
 տիեզերական ս. ժողովը 431 թ. Յունիսի 22-ին,
 որտեղ ժողովուած էին 200 հայրապետ:

Ժողովը նշովեց նեստորին ու նորա աղանգն
 և խոստովանեց Յիսուս Քրիստոս մի Որդի Աս-
 տուծոյ, իսկ Սուրբ Կոյս Մարիամին՝ Աստուածա-
 ծին:

Նախընթաց դասերի ժամանակ «Հանգանակի»
 2, 3, 4, 5, 6 և 7 մասերն ուսումնասիրելով
 սովորեցինք հետեւեալ հաւատալիքները՝ Մարդե-
 դութիւն Աստուածորդւոյն և Միւսանգամ
 գալուստն Յորա:

«Հաւատամք եւ 'ի սուրբ Հոգին, յանեղն
 եւ 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի
 մարգարէս եւ յաւետարանս. որ էջն ի Յոր-
 դանան, քարոզեաց զԱռաքեալն եւ քնակեցաւ
 ի սուրբան»:

Այս դաւանութեամբ մենք խոստովանում
 ենք, նախ՝ թէ Սուրբ Հոգին ամենասուրբ
 Երրորդութեան երեք անձերից մինն է ան-
 ժամանակապէս և անճառապէս Հօրից բոլր-
 խեալ կամ ելեալ՝ «Երեք են, որք վկայեն յեր-
 կինս՝ Հայր, Բան և Հոգին սուրբ, եւ սոքա ե-
 րեքինս մի են». ա. Յովհ. 6, 7: «Բայց յոր-
 ժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքե-
 ցից ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան, որ 'ի
 Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ». Յով.
 ԺԵ. 26:

Երկրորդ՝ Սուրբ Հոգւոյն Անեղ և Կատարեալ ստորագելիները տալով, խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին Հօր և Որդւոյ նման կատարեալ Աստուած է:

Երրորդ՝ խոստովանում ենք, թէ Հոգին սուրբ ունի այն ամեն կատարելութիւններն, ինչ որ ունին Հայր և Որդի. Նա արարչակից, գործակից է Հօր և Որդւոյ. Նա ամենագէտ է և այլն... «Հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջրոց». Ծննդ. ա. 2.

Չորրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին ներսնչեց մարգարէներին և առաքեալներին բերանացի կամ գրաւոր աստուածային յայտնութիւններն և սուրբ Աւետարանը մարդոց ուսուցանելու համար:

Հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ մարգարէներն և առաքեալները՝ Սուրբ Հոգւոյ ներսնչմամբ ու շնորհքով զօրացած՝ կարողացան հրաշագործել և զանազան լեզուներով խօսել, որով ապացուցին, թէ իւրեանց առաքելութիւնն Աստուածանից է և ուսումն երկնային՝ «Բանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ 'ի հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկք յԱստուծոյ». Պետր. 11. Ա. 21:

Վեցերորդ՝ խոստովանում ենք, թէ Սուրբ

Հոգին՝ աղաւնոյ նման իջնելով Յորդանանում մկրտող Յիսուսի վերայ, վկայեց Նորա Աստուածորդի լինելը. «Եւ անա քացան նմա երկինք, եւ ետես զհոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի եւ զայր 'ի վերայ նորա եւ անա ձայն յերկնից, որ ասէր. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ». Մատ. Գ. 17:

ՄՈՒՐՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հոգւոյն Սրբոյ Աստուածութեան դէմ մոլորութիւն յայտնեց Կ. Պօլսոյ Յունաց պատրիարք, հոգեմարտն Մակեդոն, որ Հոգւոյն Սրբոյ Աստուածութիւնը և Նորա կատարեալ անձնաւորութիւնը ուրանում էր, ինչպէս որ Արիոս ուրացաւ Որդւոյ Աստուածութիւնը և մշտնջենաւորութիւնը ընդ Հօր, և բարոզում էր թէ՛ Հոգին Սուրբ նոցա էութիւնից օտար է և լոկ պաշտօնեայ նոցա:

Սորա մոլորութիւնը դատապարտեց Կ. Պօլսոյ տիեզերական ս. ժողովն 150 հայրապետներից բաղկացած, որ 381 թ. Մայիսին Մեծն Թեոդոս կայսեր հրամանով կայացաւ: Այս ժողո-

վին մեր եկեղեցւոյ կողմից ներկայ էր Մեծն
Ներսէս հայրապետն: Ժողովը սահմանեց դաւա-
նել Հոգին սուրբ համագոյակից Հօր և Որդւոյ
ու հաւասար նոցա երկրպագելի:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

«Հաւատամք եւ 'ի մի միայն, ընդհան-
րական եւ առաքելական եկեղեցի. 'ի մի
մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քառու-
թիւն եւ 'ի թողութիւն մեղաց. 'ի յարութիւն
մեռելոց, 'ի դատաստան յաւիտենից հոգւոց
եւ մարմնոց. յարքայութիւն երկնից եւ 'ի կեա-
նըս յաւիտենական»:

Եկեղեցի բառս Յունարէն Էքլիսիա, նշա-
նակում է ժողով այն մարդոց, որոնք մի հա-
ւատով, մի յուսով և մի սիրով հաւատում են
Աստուածային ճշմարտութիւններին, որով և
միացած են միմեանց հետ՝ հոգեւոր և բարո-
յական միութեամբ:

Եկեղեցին իւր սկիզբն ունի նախամար-
դոց ժամանակներից, որոնք առաջին անգամ

պաշտեցին Աստուծուն և հաստատուն յոյս
ունեցան խոստացեալ Մեսիայի փրկութեանը:

Եկեղեցւոյ նպատակը միշտ եղել է մի
և անփոփոխ, սակայն զանազան ժամանակ-
ներում զանազան տեսակ տնտեսութեան կամ
կառավարութեան ձև ստանալով, ստացել է
և զանազան անուններ, օրինակ՝ նախամար-
դոց ժամանակից մինչև Նոյ նահապետն ա-
նուանվում է նախնի եկեղեցի, Նոյից մինչև
Աբրահամ և Յակովբ՝ նահապետական, Յա-
կովբի Իսրայէլ անուանուելուց յետոյ մինչև
Մովսէս մարգարէն՝ իսրայէլեան:

Նախնի, նահապետական և իսրայէլեան
եկեղեցիները Մեսիայի փրկութեան ակնկա-
լութիւնը պահպանում էին բերանացի աւան-
դութեամբ, բայց երբ Մովսէս տուեց իսրա-
յէլեան եկեղեցուն զբաւոր ծէսեր, արարողու-
թիւններ և դատաստանական օրէնքներ, ո-
րոնք Յիսուսով կատարուելիք փրկագործու-
թեան ստուերական օրինակներն էին, այն
ժամանակից Մեսիայի Գալստեան ակնկալու-
թիւնը պահպանուեց զբաւոր և եկեղեցին ա-
նուանուեցաւ Մովսիսական կամ ընդօրինա-
կան մինչև Յիսուսի ծնունդն, որ հաստատեց
մարդկային հոգիների փրկագործութիւնը, քրիս-
տոնէական եկեղեցւոյ հիմքը դնելով:

Քրիստոնէական եկեղեցին բաժանվում է երկուսի՝ նախ՝ անդրանկաց կամ յաղթանակող եկեղեցի, որ է սուրբ հրեշտակների և հանգուցեալ սրբերի ժողովն՝ երկրնքի կայանում ինչպէս գրում է Պօղոս առաքեալն առ Եբրայեցիս՝ «Մատուցեալ էք... յեկեղեցիս անդրանկաց գրեւոց յերկինս եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած. եւ հոգիս արդարոց կատարելոց» ԹԲ. 23:

Երկրորդ՝ զինուորեալ եկեղեցին, որ են կենդանի հաւատացեալներ. զինուորեալ է ասվում նորա համար, որովհետեւ հաւատացեալները սպառազինեալ են սուրբ հոգւոյ զէնքով աշխարհի փորձութիւններին դիմադրելու և չարի դէմ պատերազմելու համար, ինչպէս որ գրում է Պօղոս առաքեալն առ Եփեսացիս՝ «Այսուհետեւ զօրացարուք Տերամբ... եւ զզեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարողք լինիձիք կալ ընդդէմ հնարից սատանայի... վասն այնորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարողք լինիցիք ՚ի դիմի հարկանել չարին յաւուրն շարութեան» Զ. 10—14:

Զինուորեալ եկեղեցին բաժանվում է՝ ա) ուսուցանող, որք են առաքեալներ, աւետարանիչներ, քահանաներ և վարդապետներ, ու

բ) ուսանող, որ է հաւատացեալ ժողովուրդը: Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը սահմանեցինքն Յիսուս, առաքելութեան իրաւունքը տալով առաքեալներին և սորա էլ իւրեանց յաջորդներին հետեւեալ խօսքերով՝ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի, որպէս առ քեաց զիս հայր, եւ ես առաքեմ զձեզ» Մատթ. ԻԸ. 19»:

Յիսուս եկեղեցւոյ պաշտօնեաներին յատկացրեց ուսուցանելու և մկրտելու պարտաւորութիւնները հետեւեալ խօսքերով՝ «Գնացէք այսոհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրրս մինչև ՚ի կատարած աշխարհի» Մատթ. ԻԸ. 12—20:

Յիսուս եկեղեցւոյ պաշտօնեաներին իրաւունք տուեց մարդկանց մեղքերը թողնելու հետեւեալ խօսքերով՝ «Առէք զհոգին սուրբ, եթէ ումնք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա, եւ եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի» Յով. Ի. 22, 23:

ՅԵՏՎՈՒԹԻՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Քրիստոնէական եկեղեցին ունի չորս յատկութիւն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն:

Եկեղեցին «մի» է ասվում նորա համար, որ ամեն հաւատացեալները՝ թէև ազգով, լեզուով, ծէսերով, արարողութիւններով և վարչական ձևերով բաժանուած են միմեանցից, սակայն իբրև մի մարմին միացած են իւրեանց միակ գլխի—Քրիստոսի հետ մի հաւատով, մի յուսով և մի սիրով:

Եկեղեցին «սուրբ» է ասվում նախ՝ որովհետև ինչպէս որ իւր գլուխն արդար և անարատ է, այնպէս էլ սուրբ են նորա անդամներն, որ Քրիստոսի բարոյական մարմինն են. երկրորդ՝ որովհետև սրբուած են ամեն տեսակ մեղքերից մկրտութեան շնորհքով. երրորդ՝ որովհետև սրբութիւն է քարոզում և ազատ է անմաքուր, մոլար և սուտ վարդապետութիւններից. չորրորդ՝ որովհետև նորա մէջ կատարվում են քրիստոսադիր, սրբարար և շնորհաբաշխ խորհուրդներ:

Եկեղեցին «ընդհանրական» կամ յունարէն «կաթողիկէ» է ասվում նախ՝ որովհետև քրիստոնէութիւնը բոլոր աշխարհիս մէջ տա-

րածուած է և պիտի տարածուի մինչև աշխարհիս վերջը. երկրորդ՝ նա, դէպի իրան դիմող ազգերին մկրտում, սրբում, միացնում իւր հետ և անխտիր սիրով ընդունում է իւր ծոցի մէջ:

Եկեղեցին «առաքելական» է ասվում, որովհետև Քրիստոսի քարոզած հաւատը հաստատուած է առաքեալների գրուածների և աւանդութիւնների վերայ:

Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ք Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ .

Խորհուրդք եկեղեցւոյ այն ծէսերն ու արարողութիւններն են անուանվում, որոնք եկեղեցւոյ կարգաւոր պաշտօնեաների ձեռքով՝ որոշեալ նիւթով և ձևով մատակարարուելով հաւատացեալներին, վերջիններիս համար լինում են հոգւոյն սրբոյ շնորհքն ստանալու միջոցներ: Այս արարողութիւններն՝ որոնց ներքին ներգործութիւնների որպիսութիւնն անհասանելի է մեր մարդկային մտքին, անուանվում են խորհուրդ, որոնք եօթն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ կամ Զեռնադրութիւն և Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց:

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Մկրտութիւնն եկեղեցւոյ սրբարար խորհրդներէրից մինն է, որ հաստատեց Յիսուս հաւատացեալներին սկզբնական մեղքից մաքրելու և հոգևոր կեանք պարգևելու համար՝ «Մկրտեցէք զամենայն հեթանոսս յանունն չոր եւ Որդւոյ եւ հոգւոյն սրբոյ»։ Մատթ. ԻԸ. 20:

Մկրտութեան խորհրդի էական բանն է «...ծառայս Աստուծոյ մկրտի յանունն չոր եւ Որդւոյ եւ հոգւոյն սրբոյ»:

Մկրտութեան խորհուրդը կատարում են եկեղեցւոյ կարգաւոր պաշտօնեաները: Նիւթը ջուրն է, իսկ արտաքին ձևն այն է, որ երեխային ջրի մէջ երեք անգամ ընկղմելով՝ մի անգամ ասում են՝ «...ծառայս Աստուծոյ մկրտի յանունն չոր եւ Որդւոյ եւ հոգւոյն սրբոյ»:

Երեք անգամ ընկղմելն օրինակ է Քրիստոսի մահուան, թաղման և յարութեան:

Հայաստանեայց եկեղեցին մկրտութիւնը համարում է անկրկնելի. սորա համար էլ հանգանակի մէջ դաւանում ենք՝ «հաւատամք ՚ի մի մկրտութիւն»:

Դ Ր Ո Շ Մ

Դրոշմն եկեղեցւոյ սրբարար խորհրդներէրից մինն է, որ հաստատեց հոգին սուրբ իջնելով Յիսուսի վերայ մկրտութեան ժամանակ և առաքեալների վերայ Պենտեկոստէի օրն և նոցա զօրացրեց իւրեանց դժուարատար պաշտօնի մէջ՝ «Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի եւ ահա քացան նմա երկինք եւ ետես զհոգին Աստուծոյ, զի իջանէր իբրեւ զաղանի եւ գայր ՚ի վերայ նորա» — Մատթ. Գ. 16, 17:

Առաքեալները դրոշմի խորհուրդը կատարում էին ձեռք դնելով մկրտուածների վերայ, որով վերջիններն զգալի նշանով և զօրութեամբ ընդունում էին հոգին սուրբ «Եւ իբրեւ լուան՝ մկրտեցան յանունն Յիսուսի Քրիստոսի. եւ ՚ի ղնել ՚ի վերայ նոցա Պողոսի զձեռն, եկն հոգին սուրբ ՚ի վերայ նոցա» Գործք. ԺԹ. 5, 6:

Դրոշմի էական բանն է՝ «Իւղ անոյշ հեղեալ յանունն Յիսուսի Քրիստոսի կնիք երկնաւոր պարգեւաց»։ Նիւթն օրհնած միւռոնն է, իսկ արտաքին ձևն է մկրտուածի ճակատն, աչքերն, ականջները, քիթը, բերանը, ձեռ-

քերը, կուրծքը, թիկունքն և ոտները միև
նոնով խաչաձև օծելը:

Այս գգալի օծութեան միջոցով մկրտուածն
ընդունում է սուրբ Հոգւոյ օծութիւնը—
շնորհքն և գորութիւնն ու նոցանով պատե-
րազմ մղելով աշխարհի և նորա մոլութիւն-
ների դէմ՝ յաղթող է հանդիսանում:

Հայաստանեայց եկեղեցին այս խորհուր-
դը կատարում է մկրտելուց անմիջապէս յե-
տոյ, որովհետև հոգին սուրբն ևս Յիսուսի
վերայ իջաւ մկրտուելուց անմիջապէս յետոյ,
նոյնպէս և առաքեալները ձեռք էին դնում
մկրտուածների վերայ նոցա մկրտուելուց ան-
միջապէս յետոյ:

Մեր եկեղեցին դրոշմի խորհուրդն ան-
կրկնելի է համարում նոյն իսկ այն պատճա-
ռաւ, ինչ պատճառաւ որ մկրտութիւնն, ո-
րովհետև վերջինն առաջինի շարունակութիւ-
նն է:

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ապաշխարութիւնն եկեղեցւոյ խորհրդ-
ներից մինն է, որով գոյջացող մեղաւոր հաւա-
տացեալն իւր մեղքերը քահանայի առաջ Աս-

տուծոյ խոստովանելով՝ իւր հաւատի համա-
ձայն քահանայի միջոցով ստանում է Աստու-
ածանից իւր ներգործական մեղքերին թողու-
թիւն:

Ապաշխարութեան խորհուրդը հաստա-
տեց ինքն Յիսուս Քրիստոս ասելով՝ «Ոչ եկի
կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխա-
րութիւն»: Յիսուս Քրիստոս առաքեալներին
տուեց մեղքեր թողնելու իրաւունքը՝ «Փշեաց
'ի նոսա եւ ասէ, առէք հոգին սուրբ, եթէ
ուրեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի»: Յով.
Ի. 22:

Այս խորհուրդը պէտք է կատարել նախ՝
կատարեալ գոյջամբ, երկրորդ՝ անթերի խոս-
տովանութեամբ և երրորդ՝ հաստատապէս յու-
սալով, որ Յիսուս Քրիստոսի չարչարանքի ար-
դիւնքով անպատճառ թողութիւն կը ստա-
ցուի: Խորհուրդս մատակարարողներն են ե-
կեղեցւոյ կարգաւոր պաշտօնեաները:

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հաղորդութիւնն եկեղեցւոյ սրբարար խոր-
հրդներից մինն է, որ Յիսուս Քրիստոս իւր
փրկազօրծ չարչարանքի և մահուան յիշատա-

կի համար սահմանեց Պատէքի տօնի ժամանակ, այսպէս՝ Յիսուս առնում է իւր ձեռքն անխմոր հացը (բաղարջ), օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Առէք կերայք այս է մարմին իմ» և ապա առնելով բաժակն օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Արբէք 'ի սմանէ ամենքեան, այս է արին իմ»:

«Զայս արարէք առ իմոյ յիշատակի»:

«Բանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք»: Կորնթ. I ԺԱ. 26:

Հաւատացեալը հացի և գինու տեսակով ճաշակելով Յիսուս Քրիստոսի մարմինն և արիւնը միանում է Յիսուսի հետ և ընդունում է յաւիտենական կեանքը՝ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարին իմ, նա յիս ընակեացի եւ ես 'ի նմա», Յով. Զ. 57:

«Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարին իմ, ոնի զկեանս յաւիտենականս եւ ես յարուցից զնա յաւուրն յետնումս». Յով. Զ. 58:

Հաղորդուող հաւատացեալը պէտք է ունենայ նախ՝ սրտով զղջումն, երկրորդ՝ հաստատուն հաւատ, երրորդ՝ ջերմ ցանկութիւն Յիսուսին մօտենալու և չորրորդ՝ հաստատ որոշումն այլևս չմեղանջելու: Հակառակ դէպ-

քում հաղորդուող հաւատացեալը դատապարտվում է:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցւոյ կարգաւոր պաշտօնեաները:

Հաղորդութեան էական բանն է «Առէք, կերայք» և «Արբէք 'ի սմանէ» խօսքերը: Նիւթըն է անխմոր հաց (բաղարջ) և անապակ գինի. արտաքին ձևն է խորհրդոյ զործողութիւնն, որ կոչվում է պատարագ:

Հաւատացեալը պարտաւոր է տարուայ մէջ մի քանի անգամ հաղորդուել:

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն

Ամուսնութիւն եկեղեցւոյ սրբարար խորհրդներից մինն է, որ նախ՝ սահմանեց ինքն Աստուած դրախտի մէջ օրհնելով նախամարդոց միաւորութիւնն ասելով՝ «Ամեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիրը». Ծննդոց Ա. 28, և ապա Յիսուս ամուսնութեան նախկին եղծեալ սրբութիւնը, միաւորութիւնն և անլուծանելի կապը սրբագործեց և հաստատեց ասելով՝ «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մնկնեացէ». Մատթ. ԺԹ. 27: Պօզոս առաքեալն ամուսնութեան խորհուրդն անուանում

է մեծ: Նա առն և կնոջ միաւորութիւնը նըմանեցնում է Քրիստոսի իւր եկեղեցւոյ հետ միաւորութեանն ասելով «Մորհուրդս այս մեծ է, քայց ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի» Եփես. Ե. 32:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցւոյ կարգաւոր պաշտօնեաները:

Ամուսնութեան էական բանն է «Առեալ զձեռն ծայի եւ տուեալ 'ի յաջն Ադամայ եւ ասէ՛ այս է ոսկր յոսկերաց իմից եւ մարմին 'ի մարմնոյ իմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»: Արտաքին ձեւն է առն և կնոջ իւրեանց ազատ կամքով միմեանց ձեռք տալը՝ որով ներքին կերպով, սրտով, կամքով կազմում են մի բարոյական միութիւն և լինում են մի անձն:

ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգ կամ Զեռնադրութիւնն եկեղեցւոյ սրբարար խորհրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս Քրիստոս Զիթենեաց սարի վերայ: Նա, իւր համբարձման ժամանակ օրհնելով իւր առաքեալներին՝ իրաւունք տուեց նոցա ուսուցանելու հեթանոսներին, մկրտելու և

մարդոց մեղքերին թողութիւն տալու. «Եհանն զնոսա մինչեւ 'ի Բեթանիա եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա» Առկ. ԻԿ 49

«Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի». Յով. Ի. 22:

«Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիւրեցի ձեզ» Մատթ. ԻԸ. 19, 20:

Հայաստանեայց եկեղեցւոյ օրէնքով այս խորհրդին արժանանում են այն անձինքն, որոնց բարի վարքի և ուսման մասին վկայում է նոցա ընտրող եկեղեցին — ժողովուրդն, և որոնք չունին ոչինչ մարմնական արատ:

Այս ընտրեալները՝ նուիրելով իւրեանց անձն Աստուծոյ ծառայութեանը, դիմում են եպիսկոպոսին. վերջինս օրհնում է նոցա, օծում է սուրբ միւռոնով և իրաւունք է տալիս Աստուծոյ տանը սրբազորութիւն անելու և ժողովրդի հոգևոր պիտոյքը մատակարարելու:

Կարգն ունի եօթն աստիճան՝ Դռնապանութիւն, Դպրութիւն, Երգմանեցուցութիւն, Զահնկալութիւն, Կիսասարկաւազութիւն, Սարկաւազութիւն և Քահանայութիւն:

Եպիսկոպոսն և կաթողիկոսն ևս ըստ

կարգի քահանայ են, սակայն քահանայից զանազանվում են իւրեանց պաշտօնի և իշխանութեան գերազանցութեամբ:

Կարգի աստիճանը տրվում է եպիսկոպոսից՝ առաջի հինգն աղօթքով, վնցերորդը ձեռնադրութեամբ, իսկ եօթներորդը ձեռնադրութեամբ և օծմամբ:

ՕԾՈՒՄՆ ԿԱՄ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻԱՆԴԱՑ:

Օծումն կամ այցելութիւն հիւանդաց եկեղեցւոյ սրբարար խորհրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս այցելութիւն անելով հարիւրապետի հիւանդ ծառային և Պետրոսի զոքանչին և բժշկելով նոցա:

Յիսուս բժշկելու իշխանութիւն տուեց և իւր առաքեալներին՝ «Ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա՝ եւ բժշկել զամենայն ցաւս՝ եւ զամենայն հիւանդութիւնս» Մատթ. Ժ. 1:

«Եւ եղև հայրն Պոպղիայ 'ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ ղնել, առ որ մտեալ Պողոս եւ կացեալ յաղօթս, եղ զձեռնն եւ բժշկեաց զնա» Գործք. ԻԸ. 8.

Հայաստանեայց եկեղեցին այս խորհուր-

դը կատարում է այսպէս՝ քահանան խաչով և աւետարանով գնում է հիւանդի մօտ, կարդում է նորա վերայ սահմանուած աղօթքները, աւետարանները, գրքերը, սաղմոսներն և շարականները:

Հայոց Մաշտոցում այս խորհուրդն անուանվում է «գիշերային ժամ»:

Հիւանդը ջերմեռանդութեամբ խոստովանում է իւր մեղքերը, հաղորդվում Քրիստոսի սուրբ մարմնոյ և արեանն ու ըստ իւր հաւատի ստանում է մեղքերին թողութիւն և ցաւերին թեթևութիւն:

Յակովբոս առաքեալն այսպէս է պատուիրում՝ «Հիւանդանայցէ որ 'ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն՝ եւ արասցեն 'ի վերայ նորա աղօթս. օծցեն իւրով յանուն Տեառնն: Եւ աղօթքն հաւատովքն փրկեսցէ զաշխատեալն եւ յարուսցէ զնա Տէր. եթէ մեղրս իցէ զործեալ, թողցի նմա» Յակ. Ե. 14—16:

Այս խորհուրդն երբեմն առաքեալները՝ հին ուխտից առած՝ կատարում էին հիւանդին իւրով օծելով, իսկ առաքեալների յաջորդներն և մեր եկեղեցին՝ առաքելական դարից սկսած՝ կատարում են առանց օծման: Քրիստոս ինքը միշտ, իսկ իւր առաքեալները

շատ անգամ, նոյն խորհուրդը կատարում էին առանց օժման, որովհետև՝ ինչպէս Սարգիս Ծնորհալին ևս ասում է, «Ոչ ելթէ իւղն տայ առողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն»:

«Հաւատամք... 'ի յարութիւն մեռելոց»:

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ աշխարհի վերջն ամեն ննջեցեալների մարմիններն՝ Աստուծոյ հրամանով յարութիւն առնելով, պիտի միաւորուին իւրեանց հոգիների հետ և կենդանի մնացածների հետ միասին պիտի դատուին՝ «Ունիմ գոյս առ Աստուած, որում եւ դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց եւ մեղաւորաց». Գործք. ԻԳ. 15: «Ամենեքեան ննջեցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեցուք. յանկարծակի յական թօթափել՝ 'ի փող յետին, քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան, եւ մեք նորոգիցուք» Կորնթ. ձԵ. 51—52:

Արդարների մարմինները յարութիւնից չետոյ կրլինեն՝ փառաւոր՝ «Յորժամ Բրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառօր» Կող. Գ. 4: Անա-

պական՝ «Սերմանի ապականութեամբ, յառնէ առանց ապականութեան» ա. Կորնթ. ձԵ. 42: Անտա՛ «Բանզի մեռանել եւս ոչ կարեն, զի հաւասար հրեշտակաց են եւ որդիք Աստուծոյ» Ղուկ. Ի. 36: Պայծառ իբրև արեգակն՝ «Յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից». Մատ. ձԳ. 43:

«Հաւատամք... 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից, եւ 'ի կեանս յաւիտենականս»:

Սորանով դաւանում ենք, թէ Յիսուս կրկին գալու է աշխարհ և արգարագատ քննութեամբ որոշելով արդարներին մեղաւորներից՝ արդարներին տալու է իւր յաւիտենական արքայութիւնն, իսկ մեղաւորներին մատնելու է դժոխքի յաւիտենական տանջանքին: «Դաւոց է Որդի մարդոյ փառօր հօր իւրոյ հանդերձ հրեշտակօր իւրովք, եւ յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր». Մատթ. ձԶ. 27:

«Յայնժամ ասիցէ թագաւորն ցայնոսիկ, որք ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ ար-

բայուժիւն 'ի սկզբանէ աշխարհի. ասասցէ եւ ցայնոսիկ, որք ընդ անեկէն իցեն՝ երթայք յինէն, անիծեալք, 'ի հուն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա... եւ երթիցեն նորա 'ի տանջանս յաւիտենականս եւ արդարքն 'ի կեանս յաւիտենականս»
 Մատթ. ԻԵ. 34—46:

Արքայուժիւնը մի այնպիսի մեղ անիմանալի վիճակ է, որի մէջ արդարներն յաւիտեան կը վայելեն Աստուծոյ տեսութիւնը, հրեշտակների և բոլոր սրբերի հետ բնակակից լինելով:

Գժոխքը մի սարսափելի վիճակ է, ուր մեղաւորները պէտք է գրկուին Աստուծոյ տեսութիւնից, յաւիտեան պիտի տանջուին իւրեանց խղճի խայթից և հետևաբար նոքա սգոյ և խաւարի մէջ կապրին:

«Եւ ասասցէ, ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք, 'ի բաց կացէք յինէն ամենայն մշակք անիրաւութեան, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց».
 Ղուկ. ԺԳ. 27:

Նախընթաց դասերի ժամանակ «Հանգանակ»ի 8, 9, 10, 11 և 12 մասերն ուսումնասիրելով սովորեցինք հետևեալ հաւատալիքները՝ Իջումն Հոգւոյն սրբոյ 'ի Յորդանան, Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք նորա, Յարուժիւն մեռելոց և Վերջին դատաստան:

Այսպէս՝ բոլոր մեր սովորած հաւատալիքները սոքա են՝

1. Գոյութիւն Աստուծոյ
2. Միութիւն Աստուծոյ
3. Երրորդութիւն Աստուածային անձանց
4. Արարչագործութիւն
5. Կատարելութիւնք կամ Ստորագելիք
6. Նախախնամութիւն Աստուծոյ
7. Մարգեղութիւն Աստուածորդւոյն
8. Միւս անգամ գալուստն Աստուածորդւոյն
9. Իջումն Հոգւոյն սրբոյ 'ի Յորդանան
10. Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք նորա
11. Յարուժիւն մեռելոց և
12. Վերջին դատաստան:

Շ Ն Ո Ր Հ Ք

Շնորհք անուանվում են այն ամեն ներքին և արտաքին բարիքներն, որ պարգևել է և պարգևում է Աստուած հաւատացեալներին:

Շնորհքն երկու կարգի է բաժանվում ա) գերբնական և բ) սովորական:

Գերբնական շնորհքներն անուանվում են մարգարէութիւններ և հրաշագործութիւններ, որ Աստուած հին ուխտի մէջ պարգևում էր մարգարէ անունով ընտրուած մարդոց, որոնք պէտք է ներկայում ապագայի մէջ լինելիքը գուշակէին և խօսքով ու հրաշագործութեամբ ժողովրդին զէպի ճշմարիտ Աստուածպաշտութիւնը հրաւիրէին: Իսկ նոր ուխտի մէջ նոյն շնորհքներն Աստուած պարգևեց առաքեալներին և նոցա հետևողներին, որպէս զի կարողանան՝ խաւարի իշխանութեանն յաղթելով քրիստոնէական ճշմարտութեան լոյսն ընդհանուր մարդկութեան մէջ տարածել:

Շնորհքը բաշխում է ամենասուրբ երրորդութիւնն, որ մատակարարվում է սուրբ Հոգւոյ միջոցով:

Սովորական շնորհքները սուրբ Հոգին բաշխում է՝ նախ՝ նոցա, որոնք արժանապէս

ընդունում են եկեղեցւոյ սուրբ խորհուրդներն. երկրորդ՝ նոցա, որոնք հեղութեամբ և աղօթքով զիմում են նորան և երրորդ՝ նոցա, որոնք ընդունուած շնորհքներն արգիւնաւորում են:

«Զքաղցեալս լցոյց բարութեամբ եւ զմեծատունս արձակեաց ունայնս». Ղուկ. Ա. 53:

«Ոյր գուցէ տացի նմա եւ յաւելցի եւ որն ոչ գուցէ եւ զոր ունիցի բարձցի՝ ի նմանէ» Մատթ. ժԳ. 12:

Սովորական շնորհքներն, որ սուրբ հոգին մարդոց բաշխում է, սոքա են՝ հաւատ, Յոյս, Սէր, Համբերութիւն, Զօրութիւն եւ Աստուածպաշտական եռանդն, առանց որոնց չենք կարող կատարել Յիսուսի պատուիրաններն և փրկութեան հասնել, որովհետև մարգս միշտ զէպի չարն է հակամէտ:



ներն, որ իւր Որդւոյ միջոցով խոստացել է մեզ ներկայ կեանքի մէջ և երկրորդ՝ այն յաւիտենական փառքն, որով պիտի փառաւորուենք յաւիտենական հանդերձեալ կեանքում:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ



Յ Ո Յ Ս.

Յոյսն աստուածային ներքին շնորհքն է, որով քրիստոնեայն զօրացած առանց երկմտտութեան սպասում է ստանալ Աստուածանից խոստացած արդար վարձատրութիւնը՝ կամ պատիժն իւր գործերի համաձայն: «Ամեն ամէն ասեմ՝ ձեզ, որ զԲանն իմ լսէ եւ հաւատայ Այնմ, որ առաքեացն զիս, ընդունի զկեանքս յաւիտենականս» Յով. Ե. 24:

Մեր դէպի Աստուած ունեցած յուսոյ հիմքն այն հաստատուն հաւատն է, թէ Աստուած ծայրագոյն բարի է և թէ մենք հրաւիրուած ենք երջանկանալ նորանով յաւիտեան՝ թէ այս երկրաւոր կեանքում և թէ հանդերձելում:

Այսպէս մեր յուսոյ առարկան Աստուած է, որովհետև նա տալիս է մեզ այն շնորհք-

Ա Ղ Օ Թ Բ.

Աստուծոյ հետ խօսելը կոչվում է աղօթք:

Աղօթելով նախ՝ մեր սրտի գոհունակութիւն ենք յայտնում Աստուծուն մեր վայելած բարիքների համար. երկրորդ՝ խնդրում ենք նորանոր հոգևոր և մարմնաւոր բարիքներ և երրորդ՝ փառաբանում ենք նորա անունը. «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ եւ այդ ամենայն յաւելցի ձեզ» Մատթ. Զ. 33:

Մարդս աղօթքով կարող է մօտենալ Աստուծոյն և հաստատուիլ հաւատոյ և յուսոյ մէջ:

Աղօթքը լինում է հրապարակական, որ շատ աղօթողների հետ միասին կարդացվում է Աստուծոյ տաճարի մէջ՝ «Դ տաճարի նորա

ամենեքեան ասացեն նմա զփառս»։ Սաղ. ԻԸ. 9. և առանձնական, որ կատարում է մարդս ինքն առանձին միայնակ Յիսուսի պատուիրանի համաձայն՝ «Մուտ 'ի սենեակ քո, եւ փակեա զդուռս քո, կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ» Մատթ. 2. 6:

Յիսուս Քրիստոս մեզ այսպէս սովորացրեց աղօթել՝ «Յորժամ կայցէք յաղօթս մի՛ շատախօսք լինիք . . . այսպէս կացէք յաղօթս՝ Հայր մեր որ յերկինս ես. սոռքր եղիցի անուն քո. եկեսցե արքայութիւն քո. եղիցիև կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապազորդ տոռ մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողութք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ 'ի շարհ»:

Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաշխտեանս. ամեն»։ Մատթ. 2. 7—13:

Այս աղօթքն անուանվում է տէրունական աղօթք և բաժանվում է երեք գլխաւոր մասերի՝ ա) Կոչումն, բ) Խնդրուածներ և գ) Փառաբանութիւն:

ա. Կոչումն է. Հայր մեր որ յերկինս ես: Այս խօսքերով Քրիստոս մեզ սովորեց-

նում է, որ Աստուծուն Հայր անուանենք, որովհետեւ նա իւր ողորմութեամբ մեզ քրիստոնեաներիս որդի անուանեց. նա մեզ սիրում է հօր պէս և պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու: Որ յերկինս ես, ասում ենք այն պատճառաւ, որ մեր ուշքն ու միտքըն երկրաւոր կեանքից վերացնելով՝ հոգևոր կեանքն աչքի առաջ ունենանք աղօթելու ժամանակ:

բ. Խնդրուածներն եօթն են՝

1. Սուրբ եղիցի անուն քո: Սորանով մենք խնդրում ենք, որ նա մեզ տայ կարողութիւն, շնորհք իւր սուրբ անունը մեր մէջ մաքուր, սուրբ պահելու. կարողութիւն տայ որ շար գործերից հեռու մնանք:

Եթէ մենք ստախօսութիւնից, իրար մատնելուց, բամբասելուց, ուրիշին ծաղրելուց, հայհոյելուց և ուրիշ սոցա նման մեղքերից հեռու կը մնանք, այն ժամանակ Աստուծոյ անունը սուրբ պահած կը լինենք՝ «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեացեն զհայր ձեր որ յերկինս է»։ Մատթ. Ե. 18:

2. Եկեսցէ արքայութիւն քո: Սորանով մենք խնդրում ենք, որ Աստուծ մեզ շքնորհք, կարողութիւն տայ, որպէս զի մեղքից հեռանանք և նորա արքայութիւնը—

սրբութիւնը մեր սրտի մէջ բնակի. իսկ եթէ մեր սրտի մէջ սրբութիւնը կը բնակի, կը նշանակէ, որ մեր մէջ բնակում է Աստուած, որովհետեւ ինքն Աստուած սրբութիւն է՝ «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրանօք... զի անա արքայութիւն Աստուծոյ՝ ՚ի ներքս ՚ի ձեզ է» Ղուկ. ԺԷ. 20:

3. Եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի: Այս խօսքերով խնդրում ենք, թէ ինչ որ մենք գործում ենք և կամ ինչ որ մեզ է պատահում—այս բոլորն ոչ թէ մեր ցանկացածի պէս լինի, այլ ինչպէս որ Դու, Աստուած կամենում ես. և յայտնում ենք մեր որդիական հնազանդութիւնն այն բոլորն ընդունելու, ինչ որ Նա կը բարեհաճի մեզ տալ, որովհետեւ ինքն Աստուած գիտէ, թէ մեզ որ ժամանակ ինչ բան է հարկաւոր ու խնդրողին էլ ողորմածաբար տալիս է:

Նաև խնդրում ենք, որ մեզ կարողութիւն տայ իւր կամքն այնպէս կատարել, ինչպէս որ երկնքում հրեշտակներն և արգարները կատարում են՝ «Զի դու, Տէր ամենակալ, գիտես զպէտս մեր եւ զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք» Փամագիրք.

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Այս խօսքերով խնդրում ենք, որ Աս-

տուած մեզ տայ մեր մարմնի համար ամենակարևոր պիտոյք—ուտելիք, խմելիք, հագնելիք, բնակարան, որպէս զի կարողանանք ապրել:

Նաև այս խնդրուածով Քրիստոս մեզ սովորեցնում է, թէ միմիայն այս օրուայ համար հաց խնդրենք և երկրորդ օրուայ համար չմտածենք, այլ Աստուծոյ վերայ լոյս պիտի դնել, և Նա մեզ կը տայ՝ «Բանզի զիտէ հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն. խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա եւ այդ ամենայն յաւելցի ձեզ» Մատթ. Գ. 4:

5. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Այս խօսքերով խնդրում ենք մեր պարտքերն, որ են մեր մեղքերը՝ մեզ ներել, ինչպէս որ մեր դէմ մեղանչողներին ներում ենք:

Աստուած մեզ տուել է օրէնք, եթէ այդ օրէնքը, պատուիրանը չենք կատարում, նշանակում է, որ մենք պարտական ենք մնում Աստուծուն—մեղք ենք գործում. եթէ մենք Աստուածանից մեր մեղքերի թողութիւն ենք խնդրում, սակայն մեր ընկերներին չենք ներում, այն ժամանակ Աստուած էլ մեզ չի ներիլ. ազօթողը պիտի խաղաղ հոգի և սէր ունենայ դէպի իւր ընկերները՝ «Եթէ թողու-

ցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր: Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ո՛չ հայրն ձեր թողցէ զյանցանս ձեր»։ Մատթ. 2. 14, 15:

6. Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն: Սորանով խնդրում ենք մեզ հեռու պահել վատ պատահմունքներից, որոնք կարող են մեզ մեղքի մէջ ձգել. նաև խնդրում ենք զօրութիւն տալ մեզ փորձանքներին դիմադրելու:

7. Այլ փրկեա՛ն զմեզ 'ի չարէ: Սորանով խնդրում ենք ազատել մեզ ամեն տեսակ թրշուառութիւնից և անարդարութիւնից. հեռու պահել մեզ վատ մարդիկներից և վատ ճանապարհներից:

Այս եօթն խնդրուածներէից միմիայն չորրորդը վերաբերում է մեր մարմնական պիտոյքներին, իսկ մնացեալ վեցը՝ հոգւոյն: Սորանով Յիսուս մեզ պարզ հասկացնում է, որ մարդս իւր հոգւոյ փրկութեան համար աւելի պիտի մտածէ, մեծ զգուշութիւններ պիտի բանացնէ, որպէս զի հոգին չկորցնի:

Գ. Փառաբանութիւն է՝ Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Այս խօսքերով մենք աղօթողնե-

րքս Աստուծոյն փառաբանում ենք, յայտնում ենք մեր շնորհակալութիւնն և յոյսն այն բանի մասին, որ Աստուած մեր խնդրուածը կրկատարի. յայտնում ենք, որ ամեն բարիք Աստուծոյն է պատկանում, նորաիշխանութեան տակն է գտանվում այն բոլորն, ինչ որ խնդրում ենք. Ի ու, Աստուած, զօրութիւն ունիս մեր խնդրուածը տալու և քեզ պատկանում է յաւիտենական փառքը: Ամէն ասելով խօստովանում ենք, թէ վերև ասածներն իրաւէ, այդպէս լինի, — ցոյց է տալիս, որ մենք՝ աղօթելով, Աստուծոյ վերայ յոյս և հաւատ ունինք:



Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Ս Է Ր

Աստուծուն սիրելը մի ներքին շնորհք է, որով առաջնորդվում ենք այս աշխարհումս կենցաղավարուիլ Աստուծոյ կամքի համաձայն՝ այսինքն մեր բոլոր կեանքով Աստուծուն նուիրուիլ:

Մեր սիրոյ առարկան Աստուած է, սակայն Յիսուս Բրիստոս սովորեցրեց մեզ, թէ չենք կարող Աստուած սիրել առանց մեր ընկերները սիրելու, ուստի և ասաց Նա օրինականին՝ «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն ժտաց քոց. նման սմին սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձրն քո. յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք եւ ժարգարէք կախեալ կան»։ Մատթ. ԻԲ, 37:

Բրիստոնէի սէրն առ Աստուած կատա-

րեալ է, երբ նա Աստուծոյ բոլոր պատուիրանները կամ օրէնքները կատարում է անթերի, որովհետեւ այդ ամենն առաջացած լինելով միևնոյն աղբիւրից հաւասարապէս պարտաւորական են մեզ համար՝ «Այս է սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորա կատարեսցուք եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»։ Յով. Ե. 3:

Բրիստոնեայն չէ կարող արդարութիւն ձեռք բերել Աստուծոյ օրէնքները միմիայն արտաքուստ (ինչպէս փարիսեցիները) կատարելով. այլ անկեղծութեամբ ընդունելով աւետարանական ճշմարտութիւններն, այն է հաւատով միանալով Յիսուսի հետ. իսկ հաւատը մեռած է առանց սիրոյ, առանց այն մեծ շնորհքի, որ դրեց Յիսուս մեր հոգւոյ մէջ և որ կենդանացնում է մեզ, լուսաւորում և առաջնորդում դէպի յաւիտենական երջանկութիւնը:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆԻՔ

Աստուածային օրէնքները հրամայում են մեզ հեռանալ չարից և բարի գործել: Աստուածային օրէնքն երկու տեսակ է՝

ա) ընտանիքի և բ) յայտնեալ կամ գրաւոր: Բնական օրէնքն է Աստուծոյ մեր հոգւոյ մէջ դրած իւր ձայն կամ ազդարարութիւնն, որին ասում ենք խղճմտանք և որ ներսից իմաց է տալիս բարին ու չարը:

Յայտնեալ կամ գրաւոր օրէնքներն են այն կանոններն, որ Աստուած տուեց մեզ գրով և են երկու՝ հին և նոր:

Ա. Հին օրէնքները նոքա են, որոնք Աստուած տուեց իսրայէլացւոց ազգին Մովսէս մարգարէի ձեռքով:

Այս օրէնքները բաժանվում են երեք կարգի՝ ա) Արարողական կամ ծիսական, բ) Դատաստանական և գ) քարոյական:

Արարողական կամ ծիսական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց հին ուխտի մէջ աստուածապաշտութեան կարգն ու արարողութիւնները կատարելու ձևերի մասին:

Դատաստանական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց Իսրայէլի որդիներին յանցանքի համաձայն պատժելու:

Թէ արարողական և թէ դատաստանական օրէնքները քրիստոնեաների համար դադարած են, որովհետև Պօղոս առաքելի աստուծեան համաձայն՝ «Մեք ոչ եմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք». Հռով. Զ. 14:

Իսկ բարոյական օրէնքներն, որոնք տասնաբանեայ պատուիրաններն են, կարևոր բացատրութեամբ աւելի պարզուեցան և հաստատուեցան մեզ համար Յիսուս Քրիստոսով՝ «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս եւ զմարգարէս, ո՛չ եկի լուծանել, այլ լնուլ». Մատթ. Ե. 17:

ՏԱՄԱՐԱԲԱՆԵՆՅ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ.

ա. Ես եմ Տէր Աստուած քո և մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց լինէն:

բ. Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս 'ի վեր և որ ինչ յերկիր 'ի խոնար:

գ. Մի՛ առնուցու զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնօտեաց:

դ. Յիշեա՛ սրբել զօրն շաբաթու:

ե. Պատուեա՛ զհայր քո և զմայր. զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի:

զ. Մի՛ սպանաներ:

է. Մի՛ շնար:

ը. Մի՛ գողանար:

թ. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:

ժ. Մի ցանկանաբ տան ընկերի քո և մի ամենայնի որ ինչ նորա իցէ:

ա. Ես եմ՝ Տէր Աստուած քո եւ մի՛ եղիցին քեզ այլ աստուածք ըաց յինէն:

Այս խօսքերով Աստուած հրամայում է ճանաչել նորան միակ ճշմարիտ Աստուածը, հաւատալ նորան, յոյս դնել նորա վերայ, սիրել նորան, վախենալ նորանից, երկրպագանել և աղօթել նորան:

Արգելում է անաստուածութիւնը, կռապաշտութիւնն, անհաւատութիւնն և յուսահատութիւնը:

բ. Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս՝ ի վեր եւ որ ինչ յերկիր՝ ի խոնար:

Սորանով Աստուած մեզ արգելում է նիւթապաշտութիւն, կեղծաւոր աստուածապաշտութիւն, արբեցութիւն, որկրամօլութիւն, արծաթասիրութիւն... այլ հրամայում է զոցա գէմ առաքինութիւն գործել:

գ. Մի՛ առնուցու զանուն Աստուծոյ քո՛ ի վերայ սնօտեաց:

Այս խօսքերով Աստուած հրամայում է, որ մեր խօսակցութիւնների մէջ Աստուծոյ անունն երկիւղով լիշենք. նորա անունով միմիայն ճշմարիտ գործերի համար երգուենք և այն էլ շատ կարևոր ժամանակ:

Արգելում է Աստուծոյ անունն ամեն բանի համար թեթեամտութեամբ լիշել, առանց հարկաւորութեան երգուել Աստուծոյ անունով, կեղծաւորութեամբ աղօթել, եկեղեցւոյ մէջ խօսել կամ ծիծաղել...

դ. Յիշեա՛ սրբել զօրն շաքաթու:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է կիրակի և տօն օրերը պահել, առանց ծուլանալու եկեղեցի գնալ և այնտեղ Աստուծուն աղօթել, ամբողջ օրը բարի գործերին նուիրել, ս. զիրքը կարգալ, խղճմտանքը քննել և գործած սխալանքը զղջալ, աշխատել մեր նմաններին բարութիւն անել, աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, վատ գործերից հեռանալ, մարմնաւոր աշխատութիւնը դադարացնել, այսինքն առւտուրը, վարուցանքն, արհեստը...

Տ Օ Ն Ե Ր .

Տօները նուիրուած են Յիսուսին, Աստուածածնին, Սրբոց և երկնային զօրաց: Այս պատճառաւ էլ տօները լինում են *Տէրունական, Աստուածածնայ և Սրբոց.* սոցանից մի քանիսը *անշարժ* տօներ են, իսկ մի քանիսն էլ *շարժական:*

Անշարժ կոչվում են այն տօներն, որոնք ամեն տարի միևնոյն ամսաթուին են լինում:

Շարժական կոչվում են այն տօներն, որոնք որոշեալ ամսաթուեր չեն ունենում, որովհետև Չատիկն ամեն տարի միևնոյն ամսաթուին չէ պատահում, և որովհետև տօներից մեծ մասը կախումն ունին Չատիկից, այս պատճառաւ տօներն էլ շարժական են:

Անշարժ տօներն են՝ Աւետումն (7-ին ապրիլի), Ծնունդ և Մկրտութիւն Քրիստոսի (6 յունվարի), Տեառնդառաջ (14-ն փետրվ.), Յղութիւն Աստուածածնայ (9-ին դեկտ.), Ծընունդ Աստուածածնայ (8 սեպտ.), 'ի Տաճար Ընծայումն Աստուածածնի (21-ին նոյեմբ.), իսկ մնացեալ թէ տէրունական և թէ սրբոց տօները շարժական են:

Տէրունական տօներն են՝ Աւետումն, Աստուածայայտնութիւն, Թլփատութիւն, Տեա-

ռնդառաջ, Ծաղկազարդ, Չատիկ կամ Պասէք, Համբարձումն, Հոգեգալուստ, Վարդավառ— Պայծառակերպութիւն Քրիստոսի և Ս. Խաչ:

Աստուածածնայ տօներն են՝ Վերափոխումն, Յղութիւն 'ի յԱննայէ, Ծնունդ, Երեց ամաց ընծայումն 'ի Տաճար:

Սրբոց տօներն են՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի երկու տօները՝ Լուսաւորչի երեք տօները, Հրեշտակապետաց, Ամենայն սրբոց, Ս. Էջմիածնի տօն (եկեղեցւոյ տօն), ս. Թարգմանչաց—ս. Սահակի և ս. Մեսրոպի, Աբգար և Տրդատ թագաւորների, Ս. Ղևոնդեանց և Ս. Վարդանանց տօները, նաև երեք տիեզերական ս. ժողովների տօներն և այլն:

Ե. Պատուեա՛ զհայր քո ևւ զմայր, զի քարի լինիցի քեզ ևւ երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է սրտով և գործով պատուել, սիրել, հնազանդուիլ, ծառայել և ոչ մի բանով չանպատուել մեր ծնողներին, մեր մեծամեծներին, եկեղեցական հովիւներին, բարերարներին, ուսուցիչներին և առհասարակ այն բոլոր ան-

ձանց, որոնք մեր բարիքների համար աշխատում են:

Արգելում է անհնազանդութիւն, օրինագանցութիւն, ապստամբութիւն, ապերախտութիւն...:

Զ. Մի՛ սպանաներ:

Այս խօսքերով Աստուած արգելում է, որ մարդս իրան կամ ուրիշին սպանի գործիքով և թէ խօսքով. արգելում է ուրիշի կամ իւր մահը ցանկալ և կամ նպաստել այդ բանին. արգելում է ատել, նախատել, մատնել, կռուուել, ընկերին վատաբանել կամ բամբասել, ընկերներին գայթակղեցնել վատ օրինակներով...:

Է. Մի՛ շնար

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մաքուր լինել. արգելում է սրտի չար ցանկութիւններ, չար մտածմունքն իւր վատ բովանդակութեամբ խօսակցութիւններն և երգերը...:

Ը. Մի՛ գողանար:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ գողութիւն և յափշտակութիւն, արծաթասիրութիւն, վաճառականութեան մէջ խաբէութիւն, կշռքի և չափի մէջ խարդախութիւն, աղքատներին զրկել, մշակների և

ծառանների վարձը կտրել, պարտքը չվճարել, պահտուածն յետ չդարձնել...:

Հրամայում է ամեն բանի մէջ ճշմարտութիւն, արդարութիւն ունենալ:

Թ. Մի՛ սուտ վկայե՛ր զընկերէ քումմէ:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ ստախօսութիւն թէ ատենի առաջ և թէ հասարակութեան մէջ. արգելում է վատաբանել, չարախօսել, բամբասել, անարժաններին գովել:

Հրամայում է ճշմարտախօս լինել, ամեն տեղ և ամեն ժամանակ ասել «այոն՝ այո. և ոչն՝ ո՛չ»:

Ժ. Մի՛ ցանկանար տան ընկերի քո եւ մի ամենայնի որ ինչ նորա իցէ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեր ընկերների վերայ չունենալ չար աչք, չար ցանկութիւն. մեր ընկերների թէ ներքին և թէ արտաքին լաւ կողմերի վերայ չընախանձել, ընկերներից ոչ մի բան չյափրշտակել, այլ Աստուած ինչ որ մեզ տուել է, նորանով էլ բաւականանալ. ուրիշներին չբովնասել, մի խօսքով հրամայում է մեր ընկերներին ճշմարտութեամբ սիրել ու բարի աւնել:

Բ. Նոր օրէնքները Յիսուսից մեզ աւան-

դած վարդապետութիւններն են, որոնք առաքեալների և սոցա հետևողների միջոցով աւանդուեցան մեզ:

Նոր օրէնքը հիմնուած է հետևեալ սկզբբունքի վերայ՝ «Չամենայն զոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք եւ դուք նոցա». Մատթ. է. 12:

Նա հրամայում է ապաշխարել մեր մեղքերն, առանց որի մեղաւորին փրկութիւն չկայ, անձնատուր չլինել աշխարհի անցաւոր փառքերին և վայելչութիւններին, ներել միմեանց, ողորմել աղքատներին, սիրել Աստուծոյն ամենայն անձնուիրութեամբ, սիրել ընկերին իւր անձի պէս, լինել մարդասէր և բարեացակամ ամենքի համար:

Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը համառօտուած է ինն երանութիւնների մէջ՝

Ա. Երանի աղքատաց հոգևով, զի նոցա է արքայութիւն երկնից:

Բ. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեցին:

Գ. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեցեն զերկիր:

Դ. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արգարութեան, զի նոքա յագեցին:

Ե. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն:

Զ. Երանի անոցիկ, որ սուրբ են սրբտիւք, զի նոքա զԱստուած անեսցեն:

Է. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին:

Ը. Երանի որ հալածեալ իցեն վասն արգարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

Թ. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս: (Մատթ. Ե. 3—12):

Մ Ե Ղ Բ

Մեղքն է անհնազանդ. լինել Աստուծոյ հրամաններին կամ խղճմտանքի հակառակ դործել՝ «Անհնազանդութեամբ միոյ մարդոյ մեղաւորը ըագումք եղեն». Հով. Ե. 19:

Մեղքի հետևանքը մահ և դատապարտութիւն եղաւ՝ «ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ ՚ի մեղաց անտի մահ». Հով. Ե. 12:

Մեղքը լինում է սկզբնական և ներգործական:

Սկզբնական այն մեղքն է, որ մեր նախամարդիկ իւրեանց անհնազանդութեամբ գործեցին, որին ենթակայ են մարդիկ մինչև յանուն Յիսուսի կամ ամենասուրբ երրորդութեան մկրտութիւն:

Ներգործական այն մեղքն է, որ մարդս գործում է մկրտութիւնից յետոյ:

Ներգործական մեղքը լինում է թեթեւ ու մահուչապի:

Թեթեւ այն մեղքն է, որ մարդս տկամայ, անգիտութեամբ կամ մարդկային տկարութիւնից ստիպուած գործում է «ճառայ, որ ոչ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ եւ արժանի գանի ինչ գործից է, արբցէ գան ասկալ» Ղուկ. ԺԲ. 48:

Մահացու այն մեղքն է, որ մարդս գործում է գիտութեամբ իւր և իւր ընկերներին վնասելու նպատակաւ, որով զրկվում է արդար և յաւիտենական երջանկութիւնից և Աստուծոյ հետ հաղորդակցութիւնից:

Մահացու մեղքերն եօթն են՝ Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն և Բղջախոհութիւն:

1. Հպարտութիւնն է չար ախտ, որով մարդ իւր անձն ընկերներից գերազանց է համարում և այն ամեն բարիքը կամ շնորհքն, որ ունի, ոչ Աստուածանից, այլ իւր անձի ընդունակութիւնից առաջացած է կարծում:

Սորա հակառակ առաքինութիւնն է խոնարհութիւնն, որով մարդ իւր անձն ամեն բանով հաւասար է համարում իւր ընկերին և ամենայն հեզութեամբ վերաբերվում է դէպի իւր ընկերը:

2. Նախանձը մի վատթար կիրք է, որով մարդ ցաւում է և տխրում ընկերի լաւութեան և յաջողութեան համար և ուրախանում է նորա անբաղդութեան ու անյաջողութեան վերայ:

Նախանձի հակառակ առաքինութիւնն է ընկերասիրութիւնն, որով մարդ ընկերի յաջողութիւնն և ձախորդութիւնն իրանն է համարում ու ցանկանում է նորա համար այն, ինչ որ ցանկանում է իւր համար:

3. Բարկութիւնն է վնասակար հոգեկան յուզմունք, որով մարդ չկարողանալով տանել մէկից կրած նեղութիւնները կամ պակասութիւնները կատաղի վրէժխնդրութեան ոգւով է վերաբերվում դէպի նա:

Բարկութեան հակառակ առաքինութիւն

ներն է երկայնմտութիւնն, որով մարդ համբերատար ոգևով տանում է զուր տեղից կրած նեղութիւններն և պակասութիւնները:

4. Ծուլութիւնն է վնասակար ախտ, որով մարդ իւր անձնական հանգստութիւնը պաշտելով զլանում է կատարել իւր պարտաւորութիւնները:

Սորա հակառակ առաքինութիւնն է արիութիւնն, որով մարդ ոգևորուած միշտ աշխատում է կատարել իւր պարտաւորութիւններն անթերի և միշտ պատրաստ և զգոյշ է պատահելի վտանգներից:

5. Ագահութիւնն է մի ախտ, որով մարդ թէ արդար և թէ անարդար ճանապարհներով լափշտակում է ընկերի սեպհականութիւնը, ջանք է անում միշտ աւելացնել իւր սեպհականութիւններն, այն է աշխարհային հարստութիւններն առանց նոցանից բաժին հանելու բարեգործութիւնների համար:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողորմածութիւնն, որով մարդ զրդուած իւր արդար վաստակից օգնում է կարօտեալներին և աղքատներին ու բաժին է հանում աստուածահաճոյ գործերին:

6. Որկրամոլութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդ անչափաւորութիւն է պահ-

պանում ուտելիքի և ըմպելիքի մէջ, որ ասվում է որովայնամոլութիւն:

Սորա հակառակ առաքինութիւնն է ժուճկալութիւնն, որով մարդ չափաւորութիւն է պահում ուտելիքի, ըմպելիքի և ամենայն ախորժեղի բաների մէջ:

7. Բղջախոհութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդ անձնատուր է լինում անարդ կրքերին ու ցանկութիւններին:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողջախոհութիւնն, որով մարդս ազատ է պահում իւր սիրտը վնասակար մտածմունքներից և իւր անձը հեռու է պահում գայթակղեցուցիչ պատճառներից:



Արտահանում է 1957թ.

Բնակ. խո 1985
Բնակ. 40

08

3363

3364

3365


NL0031248


NL0031247


NL0031246

